№ 149 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՅՈՒԼԻՍԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՅՈՒԼԻՍԻ № 149

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 6 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԱՀՏԵՂԵԼ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, *և նրա բաժանմունքներում*—Петербургъ՝ *Морская, 11, Վարշավայում՝* Маршальковская, 130, *Պարիզում՝* 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Русское Общество Пароходства и Торговли

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ եւ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի տեղեկութիւն ամենքի, որ ներկայ յուլիսի 1-ից սահմանված է շոգենաւերի նոր լրացուցիչ պօստատարա-մարդատար նաւագնացութիւն ԱՆԱՏՕԼԻԱԿԱՆ ԳԾՈՎ—ՓՕԹԻՑ մինչև Կ. ՊՕԼԻՍ, հանդիպելով հետեւալ տեղերը. Ռիզէ, Տրապիզոն, Կիրասոն, Օրդու, Սամսօն, Սինօպ և Ինէբոլի։

Մեկնումը եւ ժամանումը շաբաթը մէկ անգամ։

ՓՕԹԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է—յուլիսի 15-ին և 29-ին, օգոստոսի 12-ին և 26-ին, սեպտեմբերի 9-ին և 23-ին, հոկտ. 7-ին և 21-ին, նոյեմբ. 4-ին և 18-ին, դեկտեմբ. 2-ին, 16-ին և 30-ին։

ՓՕԹԻ Է ԺԱՄԱՆՈՒՄ Կ. ՊՕԼԻՍ—յուլիսի 22-ին, օգոստոսի 5-ին և 19-ին, սեպտեմբ. 2-ին, 16-ին և 30-ին, հոկտեմբ. 14-ին և 28-ին, նոյեմբ. 11-ին և 25-ին, դեկտեմբ. 9-ին և 23-ին։

Այդ ուղղութիւնը, որպէս կարճ ուղղութիւն Անդրկովկասեան երկաթուղիներով, միանգամայն ծեռնտու է արտասահման ապրանք ուղարկելու եւ այնտեղից ստանալու համար։

Տեղեկութիւնների համար՝ վերաբերեալ երթեւեկութեան ժամերի, շոգենաւերի անուան և բոլոր գների՝ կարելի է դիմել Թիֆլիսի գործակալին—Վլադիմիրսկայա փ., № 18, տէլէֆոն № 11։ Այդտեղ վաճառվում են երթեւեկութեան տոմսակներ և ընդունվում են ապրանքներ՝ փոխադրելու Ռուսաստան և արտասահման, ձեռնտու պայմաններով ապահովագրելով թէ ճանապարհին և թէ պահեստում գտնվելու ժամանակ։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեան

(Կ. Չ.) առ. 713. 2—2

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

Երէկվայ մեր յօդուածում մենք հաղորդեցինք մի քանի տեղեկութիւններ Ատրպատականի հայերի ներկայ կացութեան մասին։

Մեր ստացած հաղորդագրութիւնները մանաւանդ սև գոյներով են նկարագրում Ղարադաղի գիւղերի վիճակը։ Ասպատակութիւնը հասել է իր վերին աստիճանին։ Սպառնալիքներ ամեն կողմից։ Պաշտպանութիւն ոչ մի տեղից։

Դեռ երկու շաբաթ առաջ մեր խմբագրութիւնը ստացաւ հեռագրական գոյժեր Թումանեանի ձեռքով Ղարադաղի գիւղերի մասին։ Թումանեանը գալով Բագուից Թիֆլիս, դիմեց զանազան հեղինակաւոր անձերի և նկարագրեց ուղղահայեաց կորուստները և վտանգները, որոնք առաջ են գալիս ներկայ սոսկալի վիճակից։

Այժմ Ղարադաղից ստացվել են մանրամասն նամակներ, որոնք ներկայացնում են իրերի դրութիւնը շատ անմիջական գոյներով։

Գիւղացիները թագցրել են իրանց ունեցածները որտեղ կարողացել են և պատպարվել ապահով տեղերում։ Ներկայ շաբաթներում, երբ հողագործը պէտք է իր գիւղատնտեսական գործերը առաջ տանի, խոտ հաւաքի, ցել սնի, հանող արտերը հնձի, նոր արտեր ցանի, նա թողել է իր հանդերը և ագարակները, և եթէ մտածում է կրանց՝ այդ էլ հազար վախ ու երկիւղով, ապահով չը լինելով իր կեանքի մասին, հաւատացած չը լինելով, որ իր աշխատանքի տէրը ինքն է լինում։

Ասպատակողները գործել են մինչև այժմ ազատօրէն, ոչ մի արգելքի չը հանդիպելով։ Նրանց մէջ կամ նաև անձեր, որոնք կամ հին վրէժներ են լուծում և կամ վերջին տարիների հաշիւներն են մաքրում։

Այն դիմումները, որոնք արված են պարսկահայերի կողմից իրանց կենտրոնական իշխանութեանը և ռուսահպատակների կողմից իրանց կառավարութեան ներկայացուցիչներին, երեւի կունենան ազդեցութիւն և կը մեղմացնեն պարսկական իրականութեան չափազանց վտանգաւոր խստութիւնը, բայց և այնպէս անհրաժեշտ են Ատրպատականի հայերի և առաջնորդի կողմից նորանոր դիմումներ, որովհետև Պարսկաստանի ներկայ ճգնաժամային պայմաններում յանցաւոր տարերները կարող են անպատիժ դրութեան մէջ զգալ իրանց և թոյլ տալ ամեն տեսակ արհաւիրքներ, որոնք հողին կը հաւասարեցնեն հայ շինականի բոլոր ունեցածը և կը շարեն նոր գերեզմաններ հին նահատակութեան շերիմների կողքին։

Պարսկաստանի վերանորոգութեան գործը շատ թանդ նստեց իր ազգաբնակութեան վրա։ Եւ այժմ, մի քանի տարիներ անցնելուց յետոյ, երբ մարդիկ կարող էին տեսնել գոնէ անդորը և ապահով կեանքի, նրանք զրկված են նաև այդ տարրական պահանջին բաւարարութիւն տալու հնարաւորութիւնից։

Ա. Քալանթար

ՀՐԴԵՀԻ ԱՂԷՏԸ Կ. ՊՕԼՍՈՒՄ

Սոսկալի հրդեհը աւերել է Կ. Պօլսի թաղերը։

Այրվել են Սամաթիայի, Կում-Կափուի, Մաքրի-գիւղի, Ղալաթիայի թաղերում աւելի քան 2,000 տուն։

Առանց ապաստարանի է մնացել 50,000 հոգի։

Հեռագրական Գործակալութեան տուած ցուցումներից պարզվում է, որ հրդեհը արված է չարամտութեամբ և դիտութեամբ։ Ցիրաւի, հրդեհը մի անգամից սկսվել է հինգ կէտերում և ստացել սարսափելի ծաւալ։

Ենթադրում են, որ հրդեհ անողները շարժառիթ են ունեցել քաղաքական նկատումներ այդպիսի մի մեծ ոճիր գործելու ձեռնարկելով։

Անկասկած շուտով կը պարզվեն մանրամասնութիւններ հրդեհի մասին և երեւան կը հանվեն հրդեհաձգութեան հեղինակները կամ գործակատարները։

Ողբալի է տանտեակ հաղարաւոր մարդկանց վիճակը։

Կորուստները միլիոնաւոր են, գուցէ տասնեակ միլիոնաւոր։ Այրված տների մէջ, անկասկած, կան տասնեակ հազարաւոր արժէք ունեցողներ և հասարակներ։ Եթէ այրված տները իրանց կահ-կարասիքով գնահատենք նոյնիսկ նուազագոյն հաշուով, իւրաքանչիւրը 4—5,000 ռուբլի, դարձեալ կը ստանք 8—10 միլ. ռուբլի։

Աղէտը մեծ է և թիւրքական կառավարութիւնը պէտք է պետական միջոցներով օգնութիւն հասցնի իր մայրաքաղաքի արկածեալներին։

Օգնութեան կը գան, անշուշտ, և հասարակական մարմինները ու մասնաւոր անձեր զանազան տեղերից։

Մեր հասարակութեան վրա նոյնպէս ծանրանում է պարտականութիւն արձագանք տալ իր եղբայրակիցներին նրա թշուառութեան օրերում։

Ա. Ք.

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 յուլիսի

Կ. Պօլիս.—Գիշերվայ ժամը 1 և 1 բօպէին Ստամբուլում, միաժամանակ մի քանի տեղերում մեծ հրդեհ ծագեց։ Այրվեցին մասամբ Ֆատիհ թաղամասը և հայաբնակ Սամաթիա, Կում-Կափու և Մաքրիքեօյ արուարձանները։ Հրդեհը շարունակվում է։ Մինչև այժմ այրվել է 2,000 տուն։ Մարդկային զոհերի թիւը մեծ է։ Լուրերին նայած, զինուորական մինիստրը հրդեհի ժամանակ քարով վիրաւորվել է գլխից։ Հրդեհը վերագրվում է գաղտնի չարամտութեան, որ դիտմամբ գցված է սահմանադրութեան տարեդարձին։ Վնասներն առ այժմ որոշել անհնարին է։

Պարզվեց, որ հրդեհը սկսվեց Ստամբուլում հինգ տեղերում, ապա առանձնակի հրդեհները միացան և կազմեցին մի հսկայական հրդեհ։ Կրակի կատաղի ալիքը ոչնչացրեց աւելի քան 2,000 տուն։ Այրվեցին մի քանի մզկիթներ, դպրոցներ, քարեայ շինութիւններ, ի թիւս որոց գլխաւոր շտաբի շինութիւնը։ Վերջինիս արխիվի մի մասը տարվեց զինուորական մինիստրութիւն, որը աջողվեց ազատել։ Կասկածից դուրս է, որ հրդեհը չարամիտ մարդկանց գործ է։

Պետ. Հեռ. Գործ. թղթակիցը դիտեց հրդեհի տեղը։ Այրված շէնքերը գրաւում են 16 քառ. վերստ։ Բոլորովին կործանված են մօտ 50 փողոց և նրբանցքներ։ Անապրուստ մնացած են մօտ 50,000 մարդ։ Մարդկային զոհերը դեռ չեն հաշված։ Ցերեկով սկսվեց նոր հրդեհ Ղալաթիայում, Ոսկեղջիւրի ափին։ Քամին կրակը փչում է դէպի Ստամբուլ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 յուլիսի

Մոսկվա.—Ինտենդանտական գործի առիթով դատապարտվածներից շատերը ներկայացրին վճռաբեկ բողոքագիր։ 27 հոգու մերժվեց ազատ թողնել գրաւականով, մնացածները ազատվեցին խոշոր գրաւականներով։

Պետերբուրգ. — Առաւօտեան վերադարձան մինիստրների խորհրդի նախագահը և ճան. հաղորդ. մինիստրը։

Սօֆիա.—Ֆերդինանդ թագաւորը և դահաժառանգը մեկնեցին Բաւարիայի ջրերը։

Պարիզ.—Մի քանի տեղերում երեւան են հանված երկաթուղագծերը կամովին փչացնելու դէպքեր։

Հռոմ.—Սենատոր մարկիզ Դարոնին նշանակվեց դեսպան Կ. Պօլսում։

Սանդանտէր.—Եկաւ Կանալէխասը և թագաւորական «Զիրալդա» զբօսանաւով մեկնեց խորհրդակցելու թագաւորի հետ։

Պօրտ-օ-Պրէնս. — Յեղափոխականները գլխատեցին գեներալ Ֆօմասին։ Բոլոր կառավարական զօրքերը ուղարկված են Պօրտ-օ-Պրէնս։ Դրուա-դէ-Բուվէում ապստամբները կողոպտում են եկեղեցիները և ֆրանսիական դպրոցները։

Բուդապեշտ.—Պատգամաւորների պալատ։ Օպպօզիցիան դադարեցրեց տեխնիքական օբստրուկցիան, որպէսզի հնարաւորութիւն տայ կոմս Տիսսին խօսել զինուորական օրինագծի քննութեան ժամանակ։ Վերջինս, պաշտպանելով օրինագծերը, ի միջի այլոց ասաց. «Մեր կենսական շահերը ոչ միայն մեզ Աւստրիայի մշտական դաշնակից են դարձնում, այլև ամենահաստատ նեցուկ բալկանեան պետութիւնների դաշնակիցների համար։ Մեր նպատակն է հովանաւորել բալկանեան ժողովուրդների ինքնուրոյն զարգացումը և պաշտպանել նրանց ամեն տեսակ բռնութիւնից։ Դրա համար պահանջվում է, որ մենք զինուորական տեսակէտից ուժեղ լինենք։ Մեր արտաքին քաղաքականութիւնը ագրեսսիվ չէ, բայց ձգտում է պահպանել խաղաղութիւն։ Մենք պէտք է շատանանք զինուորական ոյժերի զարգացման որոշ մինիմումով։ Մեր նաւատորմի զարգացումը բնաւ ուղղված չէ Իտալիայի դէմ»։

Պրագա.—Օպավում, Աւստրիական Սիլէզիայում 35 դիմնազիստներ արեւանար եղան։

(Լրագիրներից)

Օսմանեան սուլթանը Սելանիկ գնալով միջոցին, իր անուան սկզբնատառերը քանդակված մի ոսկէ ժամացոյց է նուիրել տեղական Թուխմանեան քահանային։

ՕԴԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 յուլիսի

Մոսկվա.—Վասիլէվը աջողութեամբ եկաւ և իջաւ աէրոպլանում առ. ժամը 4 և 18 րօպէին։

Կրեստցի.—Գործիքի փչանալուց վայր ընկաւ Ուսոչկինը, որին բժշկական օգնութիւն հասցրին։ Ապա վիրաւորվածին աւտոմօբիլով տարան հիւանդանոց։ Ժամը 9-ին երեկոյեան նա ուշքի եկաւ։ Նրա ոտք ու ձեռքը ջարդվել են։

Տվէր.—Եանսօվսկին և Կոստինը ընկան ճահճի մէջ, բայց անվնաս են։

Նովգորոդ.—Օդագնաց Լերխէի արիւնը գլուխը խփեց։

Դէնդօն.— Անգլիական շրջանային թռիչք։ Ֆարմանը բարձրացաւ ժամը 4-ին երկրորդ էտապի համար։ Նրան հետեւեց Բէդրինը, որ ժամը 8-ին եկաւ Նիւկէսալ։ Բոմոնը եկաւ նրանից յետոյ։ Վէդրինը ժամը 11-ին եկաւ Էդինբուրգ, անցնելով երրորդ էտապը։

Փրիդրիխսհաֆէն.—«Եվաբէն» դիրիժաբլը 8 մարդկանցով թռաւ Եվարցվալդը և իջաւ Բադէնի մօտերը։

Տրիէստ.—Վիդմէրը թռաւ ծովի վրայով դէպի Պիրաէս, յետոյ վերադարձաւ, անցնելով 50 կիլոմետր տարածութիւնը 35 րօպէում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 յուլիսի

Թէհրան. — Պատերազմական դրութեան հիման վրա կատարվեցին մի շարք քաղաքական ձերբակալութիւններ Թէհրանում և շրջակայքում։ Յուլիսի 10-ին Մէջիդ-ուդ-Դովլէին կալանաւորելու ժամանակ ոստիկանները կրակ բացին նրա փախչող կանանց և սպասաւորի ետեւից և սպանեցին մի յոլի կնոջ սև մի ծառայի և վիրաւորեցին 5 հոգու։ Մէջիդ-ուդ-Դովլէն կալանաւորված է։ Նրա կանայք և երեխաները բաստ նստեցին ռուսական միսիայում։ Ձերբակալված են արտաքին գործերի նախկին մինիստր Կաշիֆ-ուս-Սալթանէն, Զահիր-ուլ-Իսլամը և նախկին իմամի եղբայր Զումրին։ Բոլոր այդ գործողութիւնները ղեկավարում է հինգ վերջերս մէջլիսից հատատված հասարակական ապահովութեան կոմիտէը, որ ըստ երեւոյթին գործում է կառավարութեան հակառակ։

Սիփէհդարը պետական խնամակալին ուղարկեց հրաժարականի խնդրագիր։

Թէհրանում տիրում է վերին աստիճանի յուզալից տրամադրութիւն։

(Լրագիրներից)

Պարսկաստանի պարլամենտը մօտերս պիտի ունենայ նոր ընտրութիւններ. պարսկահայերի կողմից ընտրելիների շարքի մէջ է գտնվում նաև Նիւ-Եորկում հրատարակվող «Երիտասարդ Հայաստանի» խմբագիր Սոկրատ-խան Գէլոֆեան։

ՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Թիֆլիսի երկրորդական ճաշարաններից մէկում այս օրերս մի խումբ ղարադաղցի հայեր բոլորվել էին կենտրոնական մեծ սեղանի շուրջը և խորհրդակցում, խօսում ու լաց էին լինում իրանց սև օրվայ՝ Ղարադաղում տեղի ունեցած վերջին դէպքերի ու դէպքերի առիթով։ Խօսում էին, թէ ինչպէս մի կերպ ազատեն իրանց ընտանիքներն ու երեխաները աբիւնարբու աւազակ խաների ճանգերից, որոնք այնպէս անխնայ կերպով կոտորում, թալանում և բռնաբարում են իրանց կանանց, հարսներին ու աղջիկներին։

Ես մօտեցայ խորհրդակցող զարադաղցիների այդ խմբին, բայց արդէն ուշ էր։ Նրանք իրանց անելիքների և որոշումների մասին վերջացրել էին իրանց խօսակցութիւնը իմ այդտեղ հասնելուց առաջ և բոլորը նստած էին լուռ։ Դէմքներից պարզ նկատելի ու հասկանալի էր նրանց կսկծալի ցաւն ու միևնոյն ժամանակ զայրոյթը։

Քիչ յետոյ ներս մտան երկու զարադաղցի երիտասարդներ, և, մօտենալով մեզ, կողքիս նստած մի զարադաղցի հանեց ծոցից իր որդուց ստացած նամակը, որը գրված էր Թաւրիզից՝ Ղարադաղում տեղի ունեցած դէպքերի մասին, հետեւեալ բովանդակութեամբ, գրված՝ յուլիսի 4-ից.

«Արդէն նախկին նամակով գրած էի քեզ մեր Ղարադաղի գիւղերի թալանվելը և մարդասպանութիւնները։ Նորերս էլ Մզգիթի վրա կռիւ ընկաւ, և այդ կռւում Բաղդասար-բէկը և Համբարձում Արզումանեանը սպանվեցին և Ղազան էլ թալանի ենթարկվեց։

«Բալա-Քոխվին Ղահրաման-խանը այնքան է ծեծել, որ այժմ ուշիր չէ կարողանում նստել և շարունակ պառկած է։

«Յովհաննէսին և Յակովբին էլ ուզում էին սպանել, բայց սրանք փախան։

«Մի խօսքով, եթէ ճիշդն ես ուզում իմանալ, ապա ասեմ քեզ, որ Ղահրամանխանը 250 թուման փող է տուել չորս հարիւրի, որ Յովհաննէսի, Յակովբի, Գարբիէլի և մէկ էլ իմ տեղը ցոյց տան, որ Ղահրաման-խանը գայ մեզ բռնելու։ Ինձ նրա համար էին բռնում, որ ասում էին, թէ «հայրդ ֆէդայի է պահել իր տանը»։ Ուզում էին նաև Զաքարիա Բաղդասարեանին տանել իր հրացանի հետ, և այդ մասնութեան և մեզ վտանգ սպառնալու պատճառով փախանք։ Զորս անդամ, փախչելու ժամանակ, գիշերով մեր առաջը կտրեցին, և նորից յետ դարձանք։ Վերջապէս մի գիշեր հրացաններով միասին փախանք մի կերպ և այժմ գտնվում ենք Թաւրիզում։ Տունը չը կարողացայ բերել։ Բաւականը իրանցը բերելու է, ասել եմ, որ մերն էլ բերէ։

«Ղահրաման-խանը այժմ խիստ կերպով պահանջում է հարսներ ու աղջիկներ»։

Այդ նամակի ընթերցումից յետոյ իմ կողքիս նստած մի ուրիշ զարադաղցի պատմեց, թէ Սաղախլուից եկած մի հայից լսել է ինքը, թէ զարադաղցի թուրքեր պատմելիս են եղել, թէ ինչպէս Թումանեանց գիւղերը թալանելուց յետոյ կտրել են մի քանի կանանց ստինքները և բռնաբերել նրանց։

Ա. Իսրայէլ

ԽՕԼԵՐԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 յուլիսի

Ռակիւբ.—Իփէկի զօրքերի և ազգաբնակութեան մէջ սկսվեց խոլերա։ Երեւան հանվեցին 10 դէպք, որոնցից մինը մահով վերջացաւ։

Նիկոլայեվսկ.—Մի շաբաթվայ մէջ քաղաքում հիւանդացան խոլերայով 24, մեռան՝ 12 հոգի։ Համաճարակի սկզբից հիւանդացել են 90, մեռել են 27 հոգի։

Տրիէստ.—Երեւան հանվեցին խոլերայի երեք դէպք։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Վարկաբեկութիւն

Կ. Պօլիս, 4 յուլիս

Զէքի բէյի սպանութիւնը ամենադառն տպաւորութիւն ըրաւ մայրաքաղաքին մէջ և անշուշտ պիտի ընէ գաւառաց մէջ, որոնցմէ դեռ արձագանք չի հասնիր մեզի։

Հանրային կարծիքին մէջ այնքան հիմ բռնած և անհերքելի համոզում գտած էր ոճիրը կոմիտէին կողմէն գործուած ըլալը, որ այդ մարմինը ստիպուեցաւ հերքմանդիր մը տալ մամուլին մէջ։ Սակայն ասիկա շատ անբաւական էր հանրային վրդովուած կարծիքը յեղաշրջելու համար. փաստերը շատ պերճախօս էին, ուստի կոմիտէին պատկանող մամուլը, հերքումը աւելորդ համարելով, պարտք համարեց խոստովանիլ, թէ ոճիրը քաղաքական բնոյթ ունի, թէ այս ոճրին մէջ կոմիտէին զատ ուրիշ շահ մը ունեցող չկայ։ Միայն՝ իրենց կուսակցութիւնը զերծ պահելու համար այս արիւնալի արատէն և սոսկալի ու անները ոճրէն, բոլոր ջանքերնին կը թա-

փեն համոզելու համար, թէ կուսակցութեան ամբողջութեան վրայ չի ծանրանար այդ պատասխանատուութիւնը, այլ իրենց մէջ անգիտակցաբար սպրդած ոճրագործներ են, որ այդ գործը ըրած են։

Երբեմնի «Թանին»-ի յաջորդ, Կ. Պոլսոյ երեսփոխան Հիւսէյին Ջահիդ բէյի թերթը, «Բէյնլ»՝ յուլիս 2-ին իր խմբագրական հատուածին մէջ, իր ստորագրութեան տակ, սա շատ յատկանշական և... միանգամայն խստովանական տողերը հրատարակած էր։

«Իթթիհատի ընդհ. քարտուղար և պատասխանատու-պատուիրակ Հաջի Ադիլ բէյ երէկ ստիպուեցաւ թիւրք թերթերուն դիմ մը ղրկելով հերքել եղած ակնարկութիւնները նոյն կուսակցութեան դէմ։ Մաքրի գիւղի մէջ տեղի ունեցած ահռելի ոճիրը, որ առանց բացառութեան ամենուն վիշտ պատճառեց, անկարելի էր, որ չյուզէր հանրային կարծիքը, քանի որ խիստ հաւանական էր, թէ քաղաքական ոճիր էր անիկա։ Այս փոփուկ վայրկեաններուն մէջ, ուր երկիրն անդորրութեան պէտք ունի, վիշտ կը պատճառեն այն ամէն արարքներն, որ ցոյց կուտան թէ խղճի ու մտքի ազատութիւն չկիսի կրնայ հաստատուիլ։ Հիմա կը հաստատուի, թէ այս ահռելի ոճրին զոհը մեծ աշխատութիւն ունէր օսմ. մամուլին մէջ և կաշխատէր երկրին յառաջդիմութեանն ու երջանկութեանը՝ իր հասկցած կերպով։ Ընթերցողները զինքը չէին ճանչնար, քանի որ իր ստորագրութիւնը չէր երևեր յօդուածներուն տակ, այսուհանդերձ՝ հանգուցեալը մամուլին մէկ անդամն էր, գործօն դեր ունէր և իր դադափարներուն զոհ գնաց։ Ահա ասոր համար է, որ մեծ ցաւ պատճառած է խնդիրը և ոչ թէ իբր պարզ ոճիր։ Չենք կրնար ստիպել, որ ամէն մարդ միղի պէս խորհի։ Ասիկա անկարելի է։ Մտաւորական բոլոր անհամաձայնութիւնները երկրին համար կրնան օգտակար դառնալ, եթէ փոխադարձաբար իրարու հանդէպ վստահութիւն և յարգանք տածուի և մէկ ուղղութեամբ աշխատուի։ Ակներև է, թէ երկրին երջանկութիւնն ու փրկութիւնն այս կերպով միայն կարելի է ապահովել, ու երբ չըմբռնուիր այս ճշմարտութիւնը, և բռնութիւն ի գործ կը դրուի, մարդ ցաւ կը զգայ յանուն մտքի ազատութեան, երբ մանաւանդ բռնութիւնը կը հանի ծայրայեղ աստիճանի։ Քաղաքական ոճիրներն ամենէն աւելի կարդարանան, երբ ի գործ կը դրուին բռնապետական ոյժի մը դէմ, բայց դարձեալ յոռի ազդեցութիւն կունենան, իսկ սահմանադրական երկիրներու մէջ տեղի ունեցած ոճիրները ընաւ չունին արդարացում։ Ուրեմն ինչու ոճիր գործուեցաւ։ Արդեօք ոճրագործն է որ յղացաւ եղեռնին դաղափարը թէ ուրիշը դրդեց զինքը, և ով է դրդողը։ Շատ բնական է, որ ժողովուրդն ընէ այս հարցումը, և մենք սրտանց կը մաղթենք, որ ոստիկանական և դատական քննութիւնք ազէկ մը պատասխանեն այս հարցումներուն, զի դէպքն այնպիսի հանգամանք մը ունէր, որ տարբեր-տարբեր մեկնութիւններ տրուեցան, և տգեղ երևոյթներ պարզուեցան։ Ասոր հետևանքն եղաւ Հաջի Ադիլ բէյի զեկոյցը։ Հաջի Ադիլ բէյ ծանոյց, թէ Իթթիհատը շատ հեռու է այսպիսի գարշելի արարքներէ ու կը մերժէ եղած ակնարկութիւնները։ Այս խնդիրը քննելէ առաջ կուզենք կէտի մը վրայ հրաւիրել ընթերցողներուն ուշադրութիւնը։ Ինչպէս հանգուցեալին բարեկամները, նոյնպէս մենք ցաւեցանք այս ահաւոր ոճրին վրայ։ Ոճրին դէմ եղած հրատարակութիւններուն մենք ալ կը մասնակցինք։ Ըսուած խօսքերուն մէջ վշտի ճշմարիտ աղաղակ մը կայ, որ արձագանգ կը գտնէ ամէն սրտի մէջ։ Մտքի ազատութեան անունով մղուած ամէն պայքար պէտք է նուիրական ըլլայ, պէտք չէ դիմում ըլլայ զէնքի, ոչ ոք պէտք է թշնամի ըլլայ ուրիշի։ Շատ լաւ։ Բայց այս խնդրոյն մէջ միթէ ոմանց բռնած ընթացքն ուղիղ է։ Միթէ խղճի դրդմամբ է առիթէն օգուտ քաղելով ոճիրը վերագրել Իթթիհատին։ Ցայտնի է, թէ Իթթիհատն ինչ կերպով կազմուած է և իր պարտականութիւնը կատարած։ Կրնայ միթէ այսպիսի մեծ ընկերութիւն մը ժողով գումարել և որոշում տալ մէկը սպաննելու։ Մենք գիտնք, որ կեդրոնի ընկերութեան անդամները մրջիւնի մը արիւն անգամ մտնելու կը քաշուին և բարոյականի տէր մարդիկ են։ Ասոր համար է, որ կը յարգենք զիրենք։ Ինչ մը եթէ մտածուի, կը տեսնուի, թէ Իթթիհատին համար աւելի վնասակար ձեռնարկ չկայ, քան քաղաքական ոճիր գործել տալը։ Եթէ մէկն ուզէ չարիք հասցնել Իթթիհատին, թող անոր անունով քաղաքական ոճիր մը գործէ։ Իթթիհատն երբ սահմանադրութեան համար կաշխատէր, այն դժուարին ժամանակներուն մէջ անգամ բռնութիւն չգործեց, առանց բացառիկ ստիպողականութեան։ Մարդ անխիղճ ըլլալու է հիւա, կարծելու համար թէ Իթթիհատը կրնայ իրեն վնասակար ձեռնարկ մը կատարել։ Արդէն եթէ քիչ մը ուշադրութիւն ընծայուի ոճրին գործուած եղանակին, կը տեսնուի թէ բնաւ խելք դրուած չէ գործին մէջ։ Ոճիրը զործողները կամ գործել տուողներն եթէ նոյն իսկ Իթթիհատական եղած ըլլան, ընականաբար կարելի չէ ամօթի ու նախատինքի բաժին հանել ընկերութեան բարոյական յարգելի անձնաւորութեան, որովհետև Իթթիհատին նման ընկերութեան մը գործը չի կրնար ըլլալ ոճիր մը։ Մէկը Իթթիհատին մէջ մտնելով մարդկութենէ չելլար եւ հրեշտակ դառնար։ Իբր մարդ ամէն ոք կրնայ ամէն բան ընել եւ իր ընկերներէն ու բոլոր մարդոցմէն կայպանուի եւ իրեն դէմ կը տեսնէ օրէնքն ու կառավարութիւնը։ Նոյն յաջողութիւնը կը մաղթենք արդարութեան համար և կը սպասենք, որ այս խնդրոյն մութ կէտերը պարզուին»։

Սակայն ընդդիմադիր մամուլը ամենաբուռն կերպով կը յարձակի Իթթիհատին վրայ և նոյն իսկ, պիտի ըսեմ թէ, կը շահագործէ այս պատահարը՝ բոլորովին վարկաբեկ ընելու համար այս մարմինը, որ զեղծումներու մէջ մաքրուեցաւ դժբաղդաբար և երկրին մէջ իր դիրքը կորսնցնելու վտանգին տակ է։

Ընդդիմադիր թերթերէն շորսը դադրեցուցին իրենց հրատարակութիւնը, յայտարարելով թէ մամուլի ազատութիւն քանի որ գոյութիւն չունի, այլևս աւելորդ է իրենց հրատարակութիւնը։

Այդ ընդդիմադիրներուն մէջ ամենէն կատաղին և ամենէն աւելի ճարտարութեամբ կոմիտէն սրտէն [illegible]ողը՝ Դէրսիմի երեսփոխան Լութֆի Ֆիքրի բէյ՝ իր թերթին, «Մէրիլիկ», մէջ հետևեալ տողերը գրած է և իր թերթին հրատարակութիւնը դադրեցուցած է այն օրէն սկսեալ։

Այդ խմբագրականին վերնագիրն էր «Խեղճ երկիր», և որ ձեռքէ ձեռք յափշտակուեցաւ Կ. Պոլսոյ մէջ։

«Այո, իրապէս խեղճ է։ Երեսուն երեք տարի շարունակուող աղէտալի շրջանի մը մէջ, ամէն ոք յուսահատած՝ դէպի ապագան կը նայէր և անկէ միայն փրկութիւն կը սպասէր։ Եթէ բան մը կար, որ ներկային ազդած ցաւը կը մեղմէր, գոնէ ծերութեան հասած բռնապետի մը մահէն ետք երկրին երջանիկ ըլլալու յոյսն էր։ Աւաղ, սպասուած օրերը աւելի կանուխ եկան։ Կարգ մը անձնազոհներու ջանքով նախորդ սուլթանէն կարելի եղաւ ազատիլ՝ անոր մահէն առաջ։ Սակայն դժբաղդաբար սպասուած երջանկութիւնը չգոյացաւ։ Երկիրը մտաւ զարմանալի շրջանի մը մէջ, որուն ոչ ոք կը սպասէր։ Ամենէն մեծ ծառայութիւնները մառուցանող այդ անձնուէրներուն մէջ խառնուեցան կարգ մը անձեր, որոնց անունը և մանաւանդ բարոյականն ու խիղճը անծանօթ էին բոլորովին։ Ասոնք դիակի մը վրայ յարձակող ագռաւներու տարմի մը կը նմանէին։ Իրական անձնուէրները հետզհետէ ասոնց թողուցին իրենց դիրքը և ստիպուեցան անկիւն մը քաշուիլ տխուր ու յուսաբեկ։ Ասոնք որքան որ քաշուեցան, միւսները այնքան համարձակութեամբ գրաւեցին ասոնց դիրքերը։ Յարգելի անուններէն և ազգին նուիրական զգացումներէն օգտուելով ուզեցին իրենց դիրքը ամրացնել։ Իրենց մտքին և ձեռնարկներուն դէմ եղող ամէնէն փոքր դիտողութեան իրենց ամբողջ զօրութեամբ և սաստկութեամբ պատասխանեցին առանց վարանելու։ Ասոնք իրենք զիրենք արտօնեալ զգացին նախատել, հայհոյել, ծեծել և սպաննել, իրենց կամքը քալեցնելու համար։ Ասոնք ով են։ Արդեօք ասոնք են «Իթթիհատ վէ Թէրակկը» անունով երկրին մէջ գոյութիւն ունեցող կազմակերպութեան հիմերը։ Անծանօթ է։ Եթէ անոնք չեն, եթէ կոմիտէին հիմերը կազմողները կարգ մը պատուաւոր անձեր են, ուրեմն ինչ գործ և ինչ հանգամանք ունին այդ կոմիտէին մէջ մարդի, որոնք «քլիք» մը կը կազմեն։ Ասոնք ինչ դեր կը խաղան անոր մէջ։ Աս ալ անծանօթ է։ Արդեօք մէջտեղ ոչ կանոնաւոր կոմիտէ, և ոչ ալ կանոնաւոր «քլիք» մը կայ և կարգ մը շահասէր մարդիկ երկրին ասուան կողմը կոմիտէին անունէն կօգտուին և այս միջոցով իրենց անձնական ոխերը և եղձերը կիրագործեն։ Դարձեալ անծանօթ։ Եթէ կայ բան մը, որ ծանօթ է, ան ալ սա է, որ այս երկիրը հետզհետէ կը հասնի այնպիսի վիճակի մը, որ Արդիւլ Համիդը փնտռել կուտայ, անդորրութիւնը ու վստահութիւնը կը վերնայ, քաղաքական ոճիրները կը շատանան և ազատ խօսողները, ազատ գրողները գիշեր ատեն փողոցին մէջ կը սպաննուին։ Նախորդ բէժիմին մէջ աքսոր գացինք, բանտ մը-տանք, սակայն չկասածեցանք մեր կեանքէն։ Մեր չհաւատած Արդիւլ Համիդի ատեն զէնքը ինչ էր, ատրճանակը ինչ էր՝ չէինք գիտեր։ Սահմանադրութիւն կոչուող սա խեղճ շրջանին մէջ առանց ատրճանակի տեղ մը չենք կրնար երթալ և մեր ձեռքերը վարժեցնելու համար միշտ գնդակ կը նետենք, այնպէս որ վաղուան նշանառուներ եղանք։ Ասոնց ով պատճառը կուտայ։ Որոնք են ասոնք, որ անդթօրէն ու վատօրէն կը սպաննեն տարբեր գաղափար, տարբեր համոզում ունեցողները։ Անլուծանելի առեղծուած։ Խնդիրը տարբեր զարմանալի կողմ մը ունի։ Ուրիշ երկիրներու մէջ, ինչպէս ամէն ատեն կը տեսնուի, քաղաքական ոճիրները կը գործուին կառավարութեան դէմ, որովհետև ոճիրը գործողները իրենց ձեռքը չեն ունենար կառավարութիւնը և ուրիշ կերպով չկրնալով իրենց գաղափարը պարտադրել՝ կը տարուին ոճիր գործելու։ Սակայն մեր մէջ այս ոճիրները կը գործուին մեծամասնութեան կողմէ փոքրամասնութեան դէմ։ Ասիկա աշխարհի ոչ մէկ կողմը տեսնուած է։ Ասիկա իրենց ձեռքով իրենց գերեզմանը փորել է։ Չենք գիտեր, թէ ի՛նչպէս չեն կրնար ըմբռնել ասիկա։ Այս կացութիւնը անկարելի է որ շարունակուի։ Քանի որ մեր երկրին սահմանադրական վարչութիւն մը տուինք, ի՛նչպէս կարելի է որ կուսակցութիւն մը իր ազդեցութիւնը շարունակէ ոճիրներով, քանի որ բռնապետ վարչութիւն մը իսկ չկրցաւ իր գոյութիւնը շարունակել ոճիրներով։ Ասոնք, որ իրենց հայրենիքը կը սիրեն և խելքերնին գլուխնին է—եթէ նոյն իսկ տիրող կուսակցութիւն մը ըլլան—պէտք է որ մեղի պէս քաղաքական կուսակցութեան մը վիճակին մէջ պայքարողներու գոյութենէն զոհ ըլլան։ Հազար անգամ ցաւալի է, մեծամասնութեան կոմիտէին պատկանողներէն շատեր ասիկա չեն կրնար գնահատել և երկիրը իրենց ձեռքով անդունդ կը տանին։ Սակայն մեր կառավարութիւնը պէտք է խորունկ կերպով մտածէ ասոր վրայ։ Քաղաքական կուսակցութիւն մը, մանաւանդ իշխանութեան գլուխ գտնուող քաղաքական կուսակցութիւն մը, չի կրնար իր ընդդիմադիրները սպաննել տալ։ Զէբի բէյի սպաննութիւնը ոճրագործ Ահմէդի և իր ընկերներուն յատուկ գործ մը չէ։ Շատ հաւանական է, որ ասիկա արդիւնք է կարգ մը կարճամիտ և կոմիտէին անունը չարաչար գործածող անձերու։ Ասոնք կրնան կուսակցութեան վրայ շատ ազդեցութիւն ունենալ։ Սակայն կառավարութիւնը եթէ ուզէ իր բարեկամներու և թշնամիներու հանդէպ պահպանել իր արժանապատուութիւնը և ցոյց տալ, որ սահմանադրութիւնը գոյութիւն ունի, ասկէ աւելի առիթ մը չի կրնար ձեռք անցնել։ Կառավարութիւնը պէտք է այս ոճիրները քննէ, ճշմարտութիւնը երեւան հանելու միակ դիտումով։ Եթէ պէտք ըլլայ հարցաքննել նաև Սէբէդի երեսփոխանը և ուրիշները, պէտք է քննութիւնները ընդարձակել։ Կառավարութեան համար նուիրական պարտականութիւն մը ըլլալու է երևան հանել բոլոր անոնք, որոնք գործակցած են այս ոճիրին յղացումէն մինչև գործադրումը։ Կառավարութիւնը միայն այս կերպով կրնայ փրկել թէ ներսը և թէ դուրսը իր տկարացած դիրքը։ Պոլսոյ մէջ երկրաշնչէ ի վեր ամէն ոք չափազանց ազդուած է և անհամբերութեամբ կը սպասէ քննութիւններու ելքին։ Սակայն դժբաղդաբար, շատ մը անձեր կառավարութեան վրայ վերջին ծայր անվստահութիւն, յոռետեսութիւն ունին և կըսեն. «Կառավարութիւնը կը վախնայ, այս քննութիւնը չի կրնար առաջ տանիլ»։ Ինքզինքը գիտցող կառավարութեան մը համար ասկէ մեծ նախատինք չըլլար։ Մեր ամբողջ գոյութեանը կը մաղթենք, որ կառավարութիւնը մօտ օրէն ապացուցանէ, թէ այս կարծիքն անիրաւ է։ Մինչև որ ժողովուրդին մէջէն վերնայ այն կասկածը թէ՝ կառավարութիւնը այս մասին իր պարտականութիւնը չպիտի կրնայ կատարել, մենք չպիտի կրնանք շարունակել մեր հրատարակութիւնը։ Որովհետև այսօր այնպիսի հոգեկան վիճակի մը մէջ ենք, որ շատ մը անձեր կը պնդեն, թէ թոյլատրելի է սպաննել հակառակորդները և անպատիժ թողուլ ոճրագործները։ Այս վիճակին մէջ կարևորութիւն չենք տեսներ մեր հրատարակութիւնը շարունակելու, որովհետև կարգ մը թշուառական մարդիկ կրնան ասկէ քաջալերուիլ ոճիր գործելու համար և երկրին կործանումը պատճառող դէպքեր յառաջ բերել։ Տեղ մը ու ատեն մը, ուր կարգ մը մարդիկ խնդիրները փոխանակ գրչի, բեվոլվերով լուծելու պաշտօն ստանձնած են, ոչ քաղաքական կուսակցութիւն և ոչ ալ պայքար և նոյն իսկ սահմանադրութիւն կը մնայ։ Քանի որ հիմա խօսքը բեվոլվերինն է, մենք ալ կը լռենք և առժամաբար կը դադրեցնենք մեր հրատարակութիւնը։ Այն օրը, ուր կառավարութիւնը արագ կերպով գործադրէ օրէնքը Զէբի բէյի ոճրագործներուն դէմ և ապահով գետին մը պատրաստէ մեղի պայքարի համար, մենք ալ կը շարունակենք մեր հրատարակութիւնը»։

Այս պայմաններուն մէջ հեռուէն գուշակել անկարելի չէ, թէ Կ. Պոլսոյ մէջ մըտքերը զարհուրելի կերպով շփոթած է և կարելի չէ գուշակել, թէ մտքերու այս տրամադրութենէն ի՛նչ աղէտներ չեն կրնար ծնիլ։

Մանաւանդ դատական քննութեան համար գործածուած ձևերը և բռնուած ուղղութիւնը շատ մեծ կասկածներ կը ներշնչեն և ամենուն մտքին մէջ կուգան անգամ մը ալ հաստատել, թէ այս խեղճ երկրին մէջ արդարութիւն չկայ։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍՑԻՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՐԸ

Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, այս տարվայ յունիսի 8-ին Թիֆլիսի հայ ազգաբնակութեան զանազան խաւերի ներկայացուցիչների ստորագրութեամբ մի գրութիւն ուղարկուեց Կ. Պոլիս՝ Թիւրքիայի հայոց ազգ. երեսփոխանական ժողովի նախագահ Մանկունի արքեպիսկոպոսին, որով խնդրվում էր, որ, ի նկատի ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնների մերձեցումը և նոր թեկնածուների թեռում նաև նախկին պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանեանի անուան մուտքը տալիս սեղանի վրա դարսված գրքերը, «Գեղունիի» վերջին երկու համարները և աւելացնում է, որ մենաստանն ունի իր գրադարանը և փոքրիկ թանգարան, որն և մենք կարող ենք դիտել։ Ուրախութեամբ ընդունելով սրբազանի առաջարկութիւնը, մենք խոստանում ենք հանգստանալուց յետոյ այցելել մատենադարան-թանգարանը։ Այդքանով և վերջանում է մեր խմբական առաջին այցելութիւնը սրբազանին։

Բ.

Դուրս ենք գալիս և շրջում կղզու տափարակ մասը։ Լճի ափին զուգահեռական կան բարձր ծառեր, որոնք սակայն միմեանցից բաւական հեռու են։ Վանահօր կացարանին և դպրոցի շէնքին կպած են փոքր պարէզներ, որոնց մէջ կան մի քանի պտղատու մատաղ ծառեր, նոր ցանած ծաղիկներ և բանջարեղէններ։ այդ պարտէզները քարեայ պարիսպներով են շրջապատված։ Տափարակի ամբողջ տարածութեան վրա բուսած են բարձր թուփեր և խոտ։ Լճի ափով ձգվում է մի երկար շերտ խոշոր աւազաքարի, գեղեցիկ յղկված ընկոյզի մեծութեամբ խճերի։

Լճի Ջրի ափին մօտ գտնվող մասում երևում են կարմիր մանր կնդանիներ, որոնք այնքան շատ են, որ Ջրին կարմիր է տալիս սեղանի վրա դարսված գրքերը, «Գեղունիի» վերջին երկու համարները և աւելացնում է, որ մենաստանն ունի իր գրադարանը և փոքրիկ թանգարան, որն և մենք կարող ենք դիտել։ Ուրախութեամբ ընդունելով սրբազանի առաջարկութիւնը, մենք խոստանում ենք հանգստանալուց յետոյ այցելել մատենադարան-թանգարանը։ Այդքանով և վերջանում է մեր խմբական առաջին այցելութիւնը սրբազանին։

Բ.

Դուրս ենք գալիս և շրջում կղզու տափարակ մասը։ Լճի ափին զուգահեռական կան բարձր ծառեր, որոնք սակայն միմեանցից բաւական հեռու են։ Վանահօր կացարանին և դպրոցի շէնքին կպած են փոքր պարէզներ, որոնց մէջ կան մի քանի պտղատու մատաղ ծառեր, նոր ցանած ծաղիկներ և բանջարեղէններ։ այդ պարտէզները քարեայ պարիսպներով են շրջապատված։ Տափարակի ամբողջ տարածութեան վրա բուսած են բարձր թուփեր և խոտ։ Լճի ափով ձգվում է մի երկար շերտ խոշոր աւազաքարի, գեղեցիկ յղկված ընկոյզի մեծութեամբ խճերի։

Լճի Ջրի ափին մօտ գտնվող մասում երևում են կարմիր մանր կենդանիներ, որոնք այնքան շատ են, որ Ջրին կարմիր

գործածող անձերու։ Ասոնք կրնան կուսակցութեան վրայ շատ ազդեցութիւն ունենալ։ Սակայն կառավարութիւնը եթէ ուզէ իր բարեկամներու և թշնամիներու հանդէպ պահպանել իր արժանապատուութիւնը և ցոյց տալ, որ սահմանադրութիւնը գոյութիւն ունի, ասկէ աւելի առիթ մը չի կրնար ձեռք անցնել։ Կառավարութիւնը պէտք է այս ոճիրները քննէ, ճշմարտութիւնը երեւան հանելու միակ դիտումով։ Եթէ պէտք ըլլայ հարցաքննել նաև Սէբէդի երեսփոխանը և ուրիշները, պէտք է քննութիւնները ընդարձակել։ Կառավարութեան համար նուիրական պարտականութիւն մը ըլլալու է երևան հանել բոլոր անոնք, որոնք գործակցած են այս ոճիրին յղացումէն մինչև գործադրումը։ Կառավարութիւնը միայն այս կերպով կրնայ փրկել թէ ներսը և թէ դուրսը իր տկարացած դիրքը։ Պոլսոյ մէջ երկրաշնչէ ի վեր ամէն ոք չափազանց ազդուած է և անհամբերութեամբ կը սպասէ քննութիւններու ելքին։ Սակայն դժբաղդաբար, շատ մը անձեր կառավարութեան վրայ վերջին ծայր անվստահութիւն, յոռետեսութիւն ունին և կըսեն. «Կառավարութիւնը կը վախնայ, այս քննութիւնը չի կրնար առաջ տանիլ»։ Ինքզինքը գիտցող կառավարութեան մը համար ասկէ մեծ նախատինք չըլլար։ Մեր ամբողջ գոյութեանը կը մաղթենք, որ կառավարութիւնը մօտ օրէն ապացուցանէ, թէ այս կարծիքն անիրաւ է։ Մինչև որ ժողովուրդին մէջէն վերնայ այն կասկածը թէ՝ կառավարութիւնը այս մասին իր պարտականութիւնը չպիտի կրնայ կատարել, մենք չպիտի կրնանք շարունակել մեր հրատարակութիւնը։ Որովհետև այսօր այնպիսի հոգեկան վիճակի մը մէջ ենք, որ շատ մը անձեր կը պնդեն, թէ թոյլատրելի է սպաննել հակառակորդները և անպատիժ թողուլ ոճրագործները։ Այս վիճակին մէջ կարևորութիւն չենք տեսներ մեր հրատարակութիւնը շարունակելու, որովհետև կարգ մը թշուառական մարդիկ կրնան ասկէ քաջալերուիլ ոճիր գործելու համար և երկրին կործանումը պատճառող դէպքեր յառաջ բերել։ Տեղ մը ու ատեն մը, ուր կարգ մը մարդիկ խնդիրները փոխանակ գրչի, բեվոլվերով լուծելու պաշտօն ստանձնած են, ոչ քաղաքական կուսակցութիւն և ոչ ալ պայքար և նոյն իսկ սահմանադրութիւն կը մնայ։ Քանի որ հիմա խօսքը բեվոլվերինն է, մենք ալ կը լռենք և առժամաբար կը դադրեցնենք մեր հրատարակութիւնը։ Այն օրը, ուր կառավարութիւնը արագ կերպով գործադրէ օրէնքը Զէբի բէյի ոճրագործներուն դէմ և ապահով գետին մը պատրաստէ մեղի պայքարի համար, մենք ալ կը շարունակենք մեր հրատարակութիւնը»։

Այս պայմաններուն մէջ հեռուէն գուշակել անկարելի չէ, թէ Կ. Պոլսոյ մէջ մըտքերը զարհուրելի կերպով շփոթած է և կարելի չէ գուշակել, թէ մտքերու այս տրամադրութենէն ի՛նչ աղէտներ չեն կրնար ծնիլ։

Մանաւանդ դատական քննութեան համար գործածուած ձևերը և բռնուած ուղղութիւնը շատ մեծ կասկածներ կը ներշնչեն և ամենուն մտքին մէջ կուգան անգամ մը ալ հաստատել, թէ այս խեղճ երկրին մէջ արդարութիւն չկայ։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍՑԻՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՐԸ

Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, այս տարվայ յունիսի 8-ին Թիֆլիսի հայ ազգաբնակութեան զանազան խաւերի ներկայացուցիչների ստորագրութեամբ մի գրութիւն ուղարկուեց Կ. Պոլիս՝ Թիւրքիայի հայոց ազգ. երեսփոխանական ժողովի նախագահ Մանկունի արքեպիսկոպոսին, որով խնդրվում էր, որ, ի նկատի ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնների մերձեցումը և նոր թեկնածուների թեռում նաև նախկին պատրիարք Մաղաքիա արքեպ. Օրմանեանի անուան մուտքը տալիս սեղանի վրա դարսված գրքերը, «Գեղունիի» վերջին երկու համարները և աւելացնում է, որ մենաստանն ունի իր գրադարանը և փոքրիկ թանգարան, որն և մենք կարող ենք դիտել։ Ուրախութեամբ ընդունելով սրբազանի առաջարկութիւնը, մենք խոստանում ենք հանգստանալուց յետոյ այցելել մատենադարան-թանգարանը։ Այդքանով և վերջանում է մեր խմբական առաջին այցելութիւնը սրբազանին։

Բ.

Դուրս ենք գալիս և շրջում կղզու տափարակ մասը։ Լճի ափին զուգահեռական կան բարձր ծառեր, որոնք սակայն միմեանցից բաւական հեռու են։ Վանահօր կացարանին և դպրոցի շէնքին կպած են փոքր պարէզներ, որոնց մէջ կան մի քանի պտղատու մատաղ ծառեր, նոր ցանած ծաղիկներ և բանջարեղէններ։ այդ պարտէզները քարեայ պարիսպներով են շրջապատված։ Տափարակի ամբողջ տարածութեան վրա բուսած են բարձր թուփեր և խոտ։ Լճի ափով ձգվում է մի երկար շերտ խոշոր աւազաքարի, գեղեցիկ յղկված ընկոյզի մեծութեամբ խճերի։

Լճի Ջրի ափին մօտ գտնվող մասում երևում են կարմիր մանր կենդանիներ, որոնք այնքան շատ են, որ Ջրին կարմիր

ծումը, երեսփոխանական ընդհանուր ժողովը հաճի «օր և բօպէ առաջ վախճան տալ» Օրմանեանի վրա բարդված անհիմն մեղադրանքներին։

Ցիշեալ գրութիւնը Կ. Պոլսում ստացվել է յունիսի 28-ին։ Եւ հենց միևնոյն օրը պատրիարքական տեղապահ Վահրամ արքեպ. Մանկունին ազգ. երեսփոխանական ժողովի կողմից յանուն Թիֆլիսի թեմի առաջնորդական պաշտօնակատար Եփրեմ եպ. Սուքիասեանի ուղարկում է հետևեալ գրութիւնը։

«Թիֆլիսի մերազնէից կողմէ յունիս 8 թուակիր հանրագրութիւն մը ղրկուած ըլլալով յանուն ազգ. ժողովոյ, յանձներ էինք զայն նոյն ժողովոյ նկատումն։

«Ըստ որում այդ հանրագրութեան ներքև գտնուող ստորագրութիւնները չեն վաւերացուած ոչ ազգային պաշտօնական մարմնէ, ինչպէս կը տրամադրէ ներքին կանոնագիրը, ու Թիֆլիսի վաճառականներուն աւագը, որ վաւերացուցած է նոյն ստորագրութիւնները, ազգային պաշտօնական հանգամանք չունի, ազգ. ժողովոյ կողմէ մեզ վերադարձուած է նոյն հանրագիրը, որպէսզի դիտուած կանոնական թերին լրացնել տրուի։

«Հետևաբար նոյն հանրագիրը ընդ դրոյս ուղարկելով ձեր գեղապատուութեան, կը խնդրենք, որ բարեհաճիք վաւերացնել առնոր ներքև դրուած ստորագրութեանց խկողութիւնը ձեր և թեմ. ատենի ստորագրութեամբ և պաշտօնական կնիքով ու վերադարձնել զայն մեզ՝ ազգ. ժողովի կողմէ նկատողութեան առնուելու համար»։

Եփրեմ եպիսկոպոս պատրիարքի պաշտօնակատարի գրութիւնը պատասխանեց, որ ինքը հնարաւորութիւն չունի նրա խնդիրքը կատարել այժմ, իբր գրութիւնը ստորագրողներից շատերը քաղաքից բացակայում են ամարային շոգերի պատճառով։

ՀՈԳԻ ՇՈՒՐՋԸ

II

Նկատված է, որ ոչ մի բարեփոխութիւն մի երկրում այնքան ծանր չէ գնում, որքան գիւղատնտեսականը և այն էլ գիւղացիութեան մէջ։

Ռուտինային սովորած լինելը և դրա հետ միասին զրպիտութեան բացակայութիւնը շատ է օգնում այն բանին, որ գիւղական անտեսութեան մէջ առաջադիմութիւնը քարանայ, կանգ առնի։

Եւ մեզնում գիւղատնտեսութիւնը, ճիշդ որ, քարացել, կանգ է առել այն աստիճան, որ ահագին ջանքեր են հարկաւոր նրան առաջ տանելու, տեղից շարժելու համար։

Եւ այդ ջանքերը ահա չորս-հինգ տարի է, ինչ սկսել է նկատվել մեր մէջ փոքր ի շատէ կազմակերպված եղանակով։

Այդ կազմակերպված ջանքերի արտայայտութիւններից մէկն է նաև այն համեստ գործունէութիւնը, որ սկսել է 1909 թուականից ի վեր Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական-Տնային Ընկերութիւնը մանաւանդ դատական։

Երբէք չեմ մոռանայ անցեալ տարի՝ այդ գաղափարի պրոպագանդայով Բագու էի գնացել և ժողովել մեր ցան ու ցրիւ եղած գիւղատնտեսներից մի քանիսին՝ խորհելու մեր սկսած գործին աջակցելու մասին։ մեր ինտելիգենտներից մէկը ամենայն անկեղծութեամբ ասաց, որ «եթէ մեր ներկայ կեանքում կայ մի շարժում, որը գրաւիչ է, արդիւնաւէտ և աչքի ընկնող, այդ այն փորձերն են, որ անում են մեր մի խումբ գիւղատնտեսները գաւառում, կեանք ներշնչելու մեր մեռնող գաւառի արդիւնաբերական գործունէութեան»։

Եւ ներկայ եղողները բոլորը հաստատեցին այդ։

Բայց եկէք և տեսէք, որ այդ համեստ, այդ՝ կարող եմ ասել՝ առաջին քայլերն իսկ արդէն սկսել է համարվել չափազանցութիւն։

Այս ամառվայ սկզբին Թիֆլիսում գումարված Հայ Ուսուցչական Միութեան ընդհանուր ժողովում քիչ էր մնում, որ

գոյն են տալիս որոշ տեղերում։ Մենաստանի միւսաբան դպիրներից մէկը մեզ ասաց, որ այդ կարմիր միջատները երևում են միայն ամառվայ ամիսներում, իսկ տարվայ մնացած շրջաններում չքանում են։ Լճի յատակ և պարզ Ջրի մէջ այդ կարմիր միջատները, անդադար շարժվող և իրանց դիրքը փոխող, կազմում էին մի անթափանցիկ զանգուած, որ աւելի հրապուրիչ էր դարձնում լճի զուլալ Ջուրը։ Գաղջը է այդ Ջուրը. մէջը չը կայ աղտոտութիւն և տիղմ։ Երբ հեռուից նայում ենք այդ Ջրին, տարբեր շերտեր ենք նկատում. Ջուրը որոշ տեղեր իւղոտ է երևում և թողնում է մեծ նաւահանգիստներին մօտ Ջրի տպաւորութիւն, որի մէջ մազութ, նաւթ և այլն են փայլում Ջրի երեսին, որովհետև թեթև են Ջրից և չեն լուծվում Ջրի մէջ։ Մենք անում ենք մի քանի ենթադրութիւններ. մէկը ասում է, որ այդ տարբեր շերտերը Ջրի հոսանքից են, որ այդ տարբեր շերտերում կան տարբեր հոսանքներ։ Միւսը կարծում է, որ տարբեր երևացող շերտերն ունեն Ջրի տարբեր կազմութիւն, և որ լճի յատակում կան աղբիւրներ, որոնցից բղխող Ջրերը ևս տարբեր են միւս Ջրերից։ Երրորդն աւելացնում է, որ Ջրի տարբեր շերտեր երևալու պատճառը արևի ճառագայթների տարբեր բեկումն է։ Թերևս և այն, որ ամպերը ծածկում են արևը և տարբեր երևացող շերտերում արև չէ ընկնում, որից և տարբեր գոյն է ստացվում։ Այս վերջին ենթադրութիւնը հաւանական չէ այնքան, որովհետև արևի մայր մտնելուց յետոյ էլ, երեկոյեան, Ջրի տարբեր շերտերը նոյնն են մնում և չեն փոխվում։ Ամենից ճշմարտանմանը երկրորդ ենթադրութիւնը պէտք է համարել, որովհետև Սևանայ լճի Ջուրը, ընդհանրապէս, սովորական հոսող Ջրից տարբեր է։ Թէ այդ այդպէս է, մենք համոզվեցինք մի շարք փորձերով։

Այսպէս՝ տափարակը շրջագայելուց յետոյ, մենք վերադառնում ենք մեր կացարանը։ Ես գնում եմ սրբազանի մօտ յայտնելու, որ մեր մէջ կան պատարագի արարողութեան քաջ ծանօթ երգիչներ և որ նրանք ցանկանում են պատարագին երգել։ Սրբազանը ուրախանում է և մեծ հաճոյքով թոյլ է տալիս մեզ մասնակցել պատարագին։ Քիչ յետոյ զանգակը զողանջում են և մենք գնում ենք եկեղեցի։

Գ. Տէր-Ռուբինեան

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ 1910—1911 ԹԻՒ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ ԷԿՍԿՈՒՐՍԻԱՆ

VIII*)

Սեւանայ մենաստանը

Ա.

Կիրակի, յունիսի 12-ին, առաւօտեան ժամը 8-ին, մեր ֆուրգ

պարապմունք յայտնվէր Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդին, թէ ինչու նա նպաստներ է տալիս գիւղատնտեսական ուսման տարածմանը։

Եւ այդ անում էին հայ ուսուցիչները, գիւղական ուսուցիչները։

Դեռ երկու ամիս առաջ, կարծեմ, Ներսիսեան դպրոցի ուսուցչութեան միջից էր դուրս եկել այն բողոքը, թէ հայ հասարակութիւնը չափից դուրս է սկսել յափշտակվել գիւղատնտեսութեամբ։

Եւ այդ՝ գիտէք ինչու։ Նրա համար, որ այս տարի միայն հազար տարվայ մէջ հրապարակ եկան մի քանի խոշոր նուիրաբերութիւններ գիւղատնտեսական կրթութեան և ուսման տարածման օգտին, որոնց իրականացումը, կը նկատենք մենք, դեռևս իրանց առաջ ամնուազը 3—4 տարի ժամանակամիջոց ունի։

— Բաւական է,—ասում էին այստեղ և այնտեղ մեր ինտելիգենտները,—բաւական է, մենք արդէն սկսել ենք գիւղատնտեսութեամբ չափից աւելի յափշտակվիլ...

Եւ հասարակութեան յափշտակութեան մասին էին խօսում այն ժամանակ, երբ մեր միակ գիւղատնտեսական ընկերութիւնը ունէր 40 անդամ երեքական ռուբլով և երբ անցեալ տարի լրագրի մէջ արած իմ կոչին՝ մեռնող գիւղի մասին, արձագանք տուին մի հատ մարդ Անդրկովկասում և մէկն էլ... Ռոստովում, նուիրելով իրանց լուման՝ շուրջ քսան ռուբլի։

Եւ սա համարվում էր յափշտակութիւն, և այն էլ՝ գիւղատնտեսական...

Իսկ ապա խօսեցէք մեր ինտելիգենտների հետ առանձին առանձին՝ սկսած վաճառականից մինչև 99% մաքուր գրականագէտն ու հասարակական գործիչը։

— Հրաշալի գործ եք սկսել։

— Վերջապէս՝ ձեր մատը դրել եք մեր ցաւոտ կողմի վրա։

— Գովում ենք ձեր եռանդը, շարունակեցէք այդ ուղղութեամբ և այն և այն։

Իսկ թէ այդ գովողներից ու ծափահարողներից քանի՞սն են իրանց լուման դրել գիւղատնտեսական գանձարանի մէջ, դրա պատասխանը տուեցի ես այն քսան ռուբլու պատմութիւնը անելով և Հայ Գիւղատնտեսական և Տնայն. Ընկերութեան անդամների թիւը տալով։

Եւ այդ բոլորից յետոյ հասարակութիւնը զարմանում է, որ գիւղերում գողութիւնն ու հարստահարութիւնը սկսել է մի ախտ դառնալ, զարմանում է, որ մեր գիւղերում անկարելի է ապրել, շնչել, գործ սկսել...

Սրանք գանգատներ չեն, այլ լուսանկարումներ փաստերի, այն բանի, թէ հայ հասարակութիւնը մինչև որ ատրճան «յափշտակվում է» մեղնում գիւղատնտեսութեամբ, գիւղի ցաւերով, մեր երկրի արդիւնաբերութեան հոգսերով, յափշտակվում մինչև այն ատրճան, որ ուսուցիչն ու մանկավարժն իսկ գտնում են, որ հասել է ժամանակը ասելու՝

— Բաւական է։

Եւ այդ ասացին նրանք թերթերում, հրապարակօրէն...։

Բայց թողնենք այդ և անցնենք այն խնդիրներին, որոնք կապ ունեն հողի հետ, տանք մեր իրականութեան պատկերը՝ հատ հատ, կտոր կտոր։ դրանք կը լուսաւորեն մեր գիւղի և արդիւնաբերական ներկայ կեանքի պատկերը իրանց իսկական գոյներով։ Ա. Աթանասեան

ԵՒԱՀՈՏ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՍԻՆԴԻԿԱՏ

Մայրաքաղաքի ծխախոտագործների շրջանում ուժեղ ագիտացիա է մղվում սինդիկատ կազմակերպելու օգտին։

Մի տարուց աւել է, ինչ մրցում է տեղի ունենում Լաֆերմ ընկ. և մի խումբ ծխախոտի գործարանատէրերի, այն է՝ Ա. Շապոշնիկովի, Դուվատի, Գաբայի և այլոց միջև։

Մրցումը սկիզբն է առել էժանագին գլանակների վաճառականութիւնից (20 հատը 5 կ.)։

Լաֆերմ ընկ. անցեալ տարի պատրաստել էր մեծ քանակութեամբ էժան գնանոց գլանակներ և, որպէսզի շուտով սպառէր նրանց, նշանակել էր անհամեմատ էժան գներ, քան արժէն Մոսկվայի և Պետերբուրգի գործարանների արտադրած գլանակները, որի շնորհիւ էլ Լաֆերմ ընկերութեանը աջողվից սպառել իր բոլոր ապրանքը, մինչդեռ միւս գործարանատէրերը չէին վաճառել նոյնիսկ իրանց պահեստի ապրանքի կէսը։

Սրա հետևանքը այն եղաւ, որ գործարանատէրերը իրարից ծածուկ սկսեցին ի-ջեցնել գլանակի գները, թէև այս էլ չը նպաստեց նրանց արդիւնաբերած գլանակի տարածմանը։ Այս պատճառով էլ գործարանատէրերի միջև բանակցութիւններ սկսվեցին՝ արտադրութեան քանակը կանոնաւորելու համար, որպէսզի շուկան չը լցվի աւելորդ քանակով։

Մոսկվայի և Պետերբուրգի ֆիրմաները, բացի Լաֆերմ ընկերութիւնից, միաբ յաջացան սինդիկատ կազմակերպելու և երկար ժամանակ բանակցութիւններ մղվեցին, բայց վերջնական եզրակացութեան յանգել չը կարողացան, և սինդիկատ կազմելու վախճանական եզրակացութիւնը թողվեց Նիժնի-Նովգորոդի տօնավաճառից յետոյ կայացնել, որովհետև գործարանատէրերից շատերը կարծում են, որ տօնավաճառը նպաստաւոր կը լինի ծխախոտային արդիւնաբերութեան համար, դրա համար էլ չեն ուզում իրանց սեղմել սինդիկատի պայմաններով։

Տօնավաճառից յետոյ, երբ կը սպառվեն պահեստի ապրանքները, նոր ապրանքի պատրաստումը տեղի կունենայ սինդիկատի հսկողութեան ներքոյ։

Գործարանատէրերի գլխաւոր յոյսը կայանում է նրանում, որ սինդիկատի շնորհիւ գները 1 ռ. 90 կոպէկից բարձրացվի 1 ռ. 95 կոպէկի՝ 1000 հատ գլանակի համար։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԽԱԼ ՀԻՄՔԻ ՎՐԱ

Բարեգործութիւնը դեռ ևս դրված է անկանոն և անարդար հիմքերի վրա։

«Մշակի» № 127-ում, Բաթումից հաղորդված լուրերի բաժնում, կարդում ենք հետևեալ տողերը.

«Լսվում է, որ Բաթումի հայոց եկ.-ծխ. հոգաբարձութիւնը դիմելով Մանթաշեան ժառանգներին՝ խնդրել է 200,000 ռ. գումարից մասն հանել և Բաթումի ծխ. դպրոցին»։

Բաթումը ողորմութիւն է խնդրում, դիմել է մուրացկանութեան, և այդ՝ առանց քաշվելու, առանց ամաչելու։

Դեռ թարմ է յիշողութեան մէջ այն դէպքը, երբ Թիֆլիսի ամենահարուստ ծխականներ ունեցող Մողնու եկեղեցական Գայիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձուներն ընդունեցին այժմ հանգուցեալ վեհափառ հայրապետից 500 ռ. նուիրագրամ։

Այսպիսով՝ բարեգործութեան անարատ, վեհ սկզբունքը դառնում է անկանոն և անարդար, ստեղծվում է մի քաոս, և չես կարողանում որոշել, թէ արդարունը պէտք է իրաւացի օգնութեան հասնել և ումը մերժել։ Այսպէս՝ զօրաւոր, աչքի ընկնող չքաւոր ձևացող դպրոցների պահանջների ազդեցութեան տակ իսպառ մոռացվում են գաւառների խուլ անկիւնները, զուտ չքաւոր ժողովուրդը, դպրոցները, եկեղեցիները և այլ բարենպատակ հիմնարկութիւնները։ Որ Բաթումի նման վաճառաշահ քաղաքի ծխ. դպրոցը, նոյնպէս և Թիֆլիսի Գայիանեան ուսումնարանը կարող են աղքատ լինել, ճնշված լինել պարտքի տակ, այդ մասին առարկելու ոչ մի խօսք չունենք, միանգամայն ճիշդ կարող են լինել։ բայց ինչու ժողովուրդը, հարիւր հազարաւոր շրջանառարձութիւն ունեցող ծխականները ինքնաճանաչութեան չեն գալիս, չեն զգում, որ իրանց սրբազան պարտքն է ապահովել, իրանց կամաւոր նուէրներով հաստատուն դարձնել իրանց դպրոցի գոյութիւնը և նրա ապագան այնպէս ապահովել, որ նա հարկադրված չը լինի մուրացկանութեան դիմելու։

Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքն է և վաճառականական կապերով կապված՝ բոլոր քաղաքների հետ։ Մողնու եկեղեցու ծխականների շարքում կան այնպիսի մարդիկ, որոնք կարող են մէկի փոխարէն տասնեակ դպրոցներ պահել, և այդ՝ նրանց աչքին չի երևայ։

Բաթումը սահմանային քաղաք լինելով կապված է գրեթէ բոլոր երկիրների հետ, ունի առևտրի լայն շրջան, հարուստ վաճառականներ, ճոխ և փարաւոր նկատ ու կաց, սեփական կառքեր, աւտոմոբիլ, ամբարոց և այլն և այլն։

Եւ սակայն այսօր, ինչ էք կարծում, աղքատ են և Թիֆլիսը, և Բաթումը։

Սա ծիծաղելի չէ։

Բարեգործութիւնն էլ կատարվում է դարձեալ անկանոն կերպով, բարեգործը անկաղմակերպելով այսպիսի, մշուշով պատած, հանգամանքների տակ որոշել իր անելիքը, յանկարծ, տեսնում ես, մի այնպիսի կտակ է ստեղծում, որ մարդ սպրում է։ Օրինակ՝ մէկը հիւանդանոց է կառուցանում և ապահովում նրա ապագան այնպիսի մի քաղաքում, որտեղ այդպիսի հիւանդացածները մէկի փոխարէն տասն կան. մի ուրիշը իր ունեցած հարստութիւնը կտակում է այնպիսի մի քաղաքի դպրոցներին, որտեղ գետնի տակից ոսկի է բղխում, որտեղի մարդիկ միլիոնների հետ կապ ունեն։

Որ Թիֆլիսը և Բաթումը հարուստ քաղաքներ են, ամենքը կարող են վկայել. բայց որ աղքատ են այնտեղերի հայ դպրոցները, այդ ևս փաստ է. մէկն արդէն ողորմութիւն ստացել է, իսկ միւսը դիմել է խնդրելով։ Բայց ամենքն էլ կարող են վկայել, որ ինչպէս ամեն տեղ, այնպէս և Թիֆլիսում և Բաթումում ժողովրդական ինքնաճանաչութիւն իսպառ չը կայ, ժողովերին չեն մասնակցում, չեն գալիս, ընկերութիւններին քիչ անդամներ են գրվում (օրինակ՝ Թիֆլիսի պէս քաղաքում կ. Հ. Բ. Ընկերութիւնը հաղիւ ունի 215 անդամ). բայց ինչ էլ ուզում է լինի, այսպիսի քաղաքներին պէտք է ողորմութիւն չը տալ, տալուց՝ արդէն այլ զարկ է տրվում ժողովրդի բաւարարութեան, նրանց աչքը շարունակ յառած պիտի մնայ ուրիշներին։ Բացի դրանից, և որ առաւելն է, ծայրագաւառների կարիք ունեցող գիւղերը մնում են առանց օգնութեան, առանց բարեգործներից որևէ նպաստ ստանալու։

Դուք գնացէք ամենահեռաւոր Վաղահաս և Զափար գիւղերը և այնտեղ կը տեսնեք ամենասարսափելի չքաւորութիւն։ Դպրոցները կանգնում են, չունեն տանիք, գրատախտակ, տետրակ և մատիտ։ Ուսուցիչը ամբողջ տարին մի երես չէ տեսնում, ստիպված է կաթնով և մածնով քարշ տալ իր օրհնականը։ Գիւղացիները չքաւոր են բառիս բուն նշանակութեամբ, տան եղած-չեղածը վաճառել են և հարկ վճարել։ Աշակերտները գնում են դպրոց ոտաբոբիկ։ Եւ այլն և այլն։ Ձեր ողորմութիւնն ուղարկեցէք այսպիսի դպրոցներին, բարեգործութիւն արէք այսպիսի գիւղերին։ Այն ժամանակ բարեգործութիւնը իր բուն նպատակին հասած կը լինի, այն ժամանակ կարիք ունեցող համայնքները հասած կը լինեն իրանց ցանկութեանը։

Ի դէպ երկու խօսք. մեր հոգևորականութիւնը անունով միայն գոյութիւն ունի, իսկապէս ինքն իրան մեռած է, ոչ մի բարոյական ազդեցութիւն չունի ժողովրդի վրա, որովհետև նա կապ ունի նրա հետ, իր վարձքը նրանից է ստանում և հարկադրված է լինում նրան խոնարհվել, շողոքորթել, քծնել և այլն։ Բայց ինչ են անում Բաթումի քահանաները, երբ ազատ ոռճիկ են ստանում և նիւթապէս անմիջական կախում չունեն ժողովրդից. ինչու նրանք էլ են մեռած տարը ներկայացնում, ինչու չեն գործում, քարոզում, յորդորում ժողովրդին ապահովել իրանց դպրոցները։ Ուրեմն նրանք ապահով ոռճիկ ստանալով՝ դարձեալ անուանով միայն գոյութիւն ունեն։ Պ. Ք.

Շուշի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դպրոցի անճախանճելի վիճակը գիւղում

Կուսապատ (Զիվանշ. գ.), 2 յուլիսի

Կուսապատը բաղկացած է երեք գիւղից (Կուսապատ, Մարդակերտ և Հօռաթաղ), որոնք՝ բոլորը միասին վերցրած՝ ունեն 600—700 ծուխ և մի-մի քարաշէն եկեղեցի։ Բուն Կուսապատը ունի պետ. երկդասեան տղայոց ուսումնարան արհեստանոցի բաժանմունքով. Մարդակերտը՝ միդասեան. իսկ Հօռաթաղը զուրկ է ուսումնարանից։ Շնորհիւ տ. Գ. Աթաբէկեանցի ձեռք առած միջոցների, Կուսապատում բացվել էր եկ.-ծխ. օրիորդաց ուսումնարան։ Այս վերջին դպրոցն 3—4 տարի իր գոյութիւնը պահեց բաղուաքնակ հայ երիտասարդների նուիրական օգնութեամբ։ Այդ ուսումնարանում տարեկան սովորում էին մօտ 35—40 աշակերտուհի։ Ուսումնարանի նեղուածք լինելու պատճառով՝ շատ երեխաներ մերժում էին ստանում դպրոցում ընդունվելու։ Մարդակերտը նոյնպէս ունէր ծխ. ուսումնարան, ուր սովորում էին 60—70 աշակերտուհիներ և որ իր գոյութիւնը շարունակում էր երկու տարուց ի վեր։ Այժմ այդ երկու ուսումնարանը ահա մի տարի է, ինչ փակված են փող չը լինելու պատճառով։

Մարդակերտ գիւղը չունի աչքի ընկնող օտարաքնակ երիտասարդներ, բայց ինքը գիւղը այնպէս հարուստ է, որ կարող է հեշտութեամբ պահել մի ուսումնարան, սակայն մարդակերտցիների անմիաբանութեան պատճառով տուժում է մատաղ սերունդը։ Իսկ բուն Կուսապատը թէև աղքատ է, բայց կարող է պահպանել մի ուսումնարան, եթէ անկեղծօրէն ուզենայ այդ։ Եւ ահա թէ ինչպէս։ Կուսապատն ունի օտարութեան, մանաւանդ Թիֆլիսի ու Բաքուի մէջ յայտնի բժիշկներ, իմաստասէրներ, գործակատարներ և այլն, որոնք առանց գիւղի աջակցութեան կարող են մէկի տեղ երկու դպրոց պահել։

Մեր գաւառը մուտք չէ գործում ոչ Կ. Հ. Բ. Ընկ. և ոչ էլ Բ. Հ. Կուլտ. Միութիւնը, մինչդեռ այդ վերջինները մեր հարևան գաւառներում գործում են եռանդուն և բանում են ճիւղեր և այլն։ Այդպիսի պայմաններում ցանկալի էր, որ այդ բարենպատակ հիմնարկութիւններից մէկին ու մէկը գար մեր շրջանը՝ տեղի վրա ճիւղ բանալու կամ թէ իր նախաձեռնութեամբ առաջիկայ սեպտեմբերից Մարդակերտի և Կուսապատի ծխ. ուսումնարանները վերաբանալ, մանաւանդ որ այդ դպրոցների պիտոյքները փչանում են արևի և անձրևի տակ, իսկ հարիւրաւոր երեխաներ՝ փողոցներում։ Լ.ղասաղ

Ծխ. ժողովը Քերքիում

Քերքի, 1 յուլիսի

Յունիսի 26-ին հոգաբարձութեան հրաւէրով կայացաւ տեղիս դպրոցի դահլիճում ծխ. ժողով։ Ժողովի գլխաւոր նպատակն էր քննել ուսումնարանի շինութեան հարցը։ Ծխականների պահանջմամբ գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց 3 հոգուց բաղկացած վերատեսուչ մի յանձնաժողով՝ հաշիւները ստուգելու և առաջիկայ կիրակի կայանալիք ծխ. ընդհ. ժողովին ներկայացնելու համար։

Ապա ժողովը անցաւ առաջիկայ ուսումն. տարվայ համար հրաւիրելիք ուսուցչական կազմի խնդրին։ Ընդհանուրի ցանկութիւնը այն է, որ առաջիկայ ուսումն. տարվայ համար հրաւիրվի մի ճեմարանաւարտ կամ ներսիսեանաւարտ քահանայ, ինչպէս և կրթական ցնդ ունեցող մի ուսուցչուհի։ Քանի որ անցեալ տարի ուսումնարանը ունէր մի բաժանմունք, կարիք չէ զգացվում երկու ուսուցչի։ Իսկ առաջիկայ սեպտեմբերից լինելու է երկու բաժանմունք, ուրեմն և ժողովուրդը ցանկանում է հրաւիրել անպայման քահանայ, որ թէ կը լինի ուսուցիչ մատաղ սերնդի, և թէ հովիւ-քահանայ՝ տեղիս ժողովրդին։ Այս խնդրի առթիվ եղած թեր և դէմ վիճաբանութիւնից յետոյ՝ հարցի լուծումը յետաձգվեց առաջիկայ կիրակի կայանալիք ծխ. ընդհ. ժողովին, քանի որ առճկի մասին վերջնական որոշում կարելի չեղաւ կայացնել։

Պէտք է նկատել, որ մեզանում առ հասարակ ծխ. ժողովները շատ անկանոն են անցնում գլխաւորաբար այն պատճառով, որ ժողովականներն ամեն բանից առաջ չեն ձեռնարկում նախագահի և քարտուղարի ընտրութեան։ Ատ.

ՋՐԻ ՏՕՆԸ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

Ջուրը կեանք է և հարստութիւն։

Ով երկրի և հողագործութեան հետ է կապված մեր կիսող արևի և կապուտակ երկնքի տակ, ով սրտատրոփ նայում է իր ծարաւ արտերին և տեսնում է իր տարվայ բերքի կորուստը Ջրի պակաւութիւնից, ով այդ այրող ճառագայթների տակ ճանապարհորդել է «անջրդի» տարածութիւններով, նա քաջ գիտէ նոյնիսկ մի բաժակ ցուրտ ջրի նշանակութիւնը։

Այդ պատճառով ջուրը հանելը, աղբիւր շինելը և ջրհոր փորելը շատ հին դարերից ի վեր համարվել է սուրբ գործ և կատարվել մեծ խնամքով ու ոգևորութեամբ։

Մարդիկ ջրի էա ատուածուհուն տուել են երկրորդ տեղը իրանց ատուածների պանթէօնում և պաշտել ու պաշտում են ցայսօր զանազան ձևերով և անուններով։

Մօտաւացիք Բեսարաբիայում մեծ ճանապարհների կողքին իրանց մեղքերի քաւութեան կամ ննջեցեալների յիշատակին փորում են ջրհորներ և նրանց մօտ խաչ անկում։

Մեր երկրի թագաւորներն ու իշխանները, թագուհիք և իշխանուհիք նոյնպիսի խնամքով են իրանց անունը դրոշմել իրանց շինել տուած աղբիւրների ճակատներին, որպէս և կառուցած հոյակապ տաճարներին։

Բացի կրօնական բարի գործ նկատելուց՝ շատ տեղ Արևելքում և հենց մեզ մօտ մի քանի գաւառներում ջուր ունենալու, ջուր հանելու վրա նայել են որպէս առևտրական արդիւնաւէտ ձեռնարկութեան վրա, և այժմս Հին-Նախիջևանում կան անհատներ և խմբակցութիւններ, որոնք ջուր են հանել ոչ միայն իրանց կալուածների, այլ և վաճառելու համար։

Նրանցից շատերը, ծախսելով 3—6000 ռ., այնքան ջուր են ստացել, որ տարեկան եկամուտ են վերցնում 2800—4000 ռ., առանց կրակից ու ցեցից վախենալու։

Այդպիսի ջրանցք ունենալ ցանկացաւ և Մելիք-Էյնաթեանը թէ իր կալուածքի և թէ կարիք ունեցողներին ոռոգութեան ջուր տալու համար։

Յունվարի վերջերին ևս հրաւէր ստացայ գնալու և առ տեղեան որոշելու, թէ որքան յուսալի է պարոնի կալուածքը՝ ջուր ստանալու համար։

Փետրվարի վերջին մենք հասանք Հին-Նախիջևան։ Ուսումնասիրութիւնը կատարվեց Դէօկասէի և Ֆրանցիուսի գործիքներով, և ապա տեղի ունեցան հորեր փորելու աշխատանքներ՝ Ջրի խորութիւնը որոշելու համար։

Ուսումնասիրութիւնն ու կատարված աշխատանքները ցոյց տուին, որ 18 սաժէն խորութեան վրա Հին-Նախիջևանում ուենենք երեք շերտ. մինը 17½ արշին խորութեան վրա, միւսը՝ 36 արշին, իսկ երրորդը՝ 18 սաժէն խորութեան վրա։ Վերջին շերտը արտէզեան ջրի շերտն է, որից անշուշտ կարելի է օգտվել մեծ չափով։

Վարձվեցին վարպետներ ու բանւորներ և սկսվեցին աշխատանքներ, որոնք շնորհիւ վատ եղանակների, փոփոխվող վարպետների և նրանց նորանոր պահանջների՝ առաջ էին գնում բաւականին դանդաղ։ Նրանք արագացան Ալի անունով վարպետին վարձելուց յետոյ, որը 24 օրում կարողացաւ կատարել բաւական մեծ գործ և կարողացաւ աշխատեցնել մօտ 20—28 հոգի։

Այդքան կարճ ժամանակում փորվեց 106 սաժէն տունել և 10 սաժէն բաց ջրանցք, ուղղվեց տունելի յատակը և յունիսի 31-ին նշանակվեց «Ջրի տօնը», ջուր թողնելու օրը։

Մելիք-Էյնաթեանի կարգադրութեամբ որոշված էր ճաշ տալ բոլոր աշխատաւորներին, որոնք առանց մատաղի չէին համաձայնում քանդել ստորերկրեայ ջրի հոսանքի դէմ դրված պատուարը, յայտնելով որ Ջրի առաջին հոսանքին պէտք է խառնվի և մատաղի արիւնը։

Գնվեց մատաղացու ոչխար, բանւորներին արքայուղացու կոտոր և ցերեկվայ ժամը 11-ին մօտ՝ ջրանցքի եզերքը լցվեց հետաքրքիր անցորդներով։ Երբ ամեն ինչ պատրաստ էր, մատաղացու ոչխարը պառկեցրած՝ Ջրանցքի եզերքի մօտ, վարպետ Ալին մտաւ տունելի բերանը և ձայն տուեց.

— Փառաբանեցէք Աստուծուն։

— Այդքեղ է վայել և քո իրաւունքն է,— պատասխանեցին միւսները։

— «Բարեբերի Խուդա, խաթման բիա սալաւաթ»։ (Հազար փառք Աստուծուն ու նրա մարգարէին)։

— «Խաթման բիա սալաւաթ»։

— «Բար Մուհամմադ վա Ալլու սալաւաթ»։ (Փառք Մուհամմէդին և Ալիին)։

— «Բար Մուհամմադ վա Ալլու սալաւաթ»,—ասում էր վարպետը ու կրկնում էին բանւորները։

Վերջապէս քանդվեց դրված պատուարը, և Ջրի հոսանքը ժայթքեց դէպի Ջրանցքի եզերը։ Իսկոյն մոռթվեց մատաղի ոչխարը և Ջրի առաջին հոսանքը ներկվեց արիւնով։ Վարպետ Ալին լցրեց բաժակը պաղ, մաքուր Ջրով և առաջարկեց մեզ. խմեցինք գոհութեամբ, ի հարկէ պարզեատրելով նրան։

Անցուդարձ անողները յայտնում էին իրանց գոհունակութիւնը, օրհնում նախաձեռնողին, գիտութիւնն ու աշխատանքը։

Առայժմ հոսում է օրական 15,000 վեդրո վճիտ պաղ ջուր 11° Ջերմութեամբ։ Աշխատանքները նոր են մտնում Ջրատու շերտերը և տարվելու են դեռ 200 սաժէն։ Անշուշտ կը ստացվի օրական 300,000 վեդրո Ջուր տուող հոսանք, որը երկու տարում լուծեամբ կը ծածկի եղած ծախսը, ապահովելով մարդկանց գցած սերմի արդիւնքը և ճոխ բուսականութեամբ ծածկելով 20 դեսեատինից աւելի տարածութիւն։ Բայց յաջորդող հետևանքների մասին կը հաղորդեմ իր ժամանակին։ Գ. Մուրադեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոր-Բայազէտ, 8 յուլիսի

Յուլիսի 2-ին տեղիս դատարանում քննվում էր մի հետաքրքրական գործ, որը վերաբերում էր մօտակայ Դշլաղ գիւղի Զեռնդ քահանային՝ իր գիւղացի Խ-ի հետ։ Վերջինս մեղադրում էր քահանային՝ այն բանում, որ սա դանակով վիրաւորել էր իրան, երբ ինքը յանդգնել էր տէր-Զեռնդին բռնել իր ծխականներից մէկի կնոջ հետ, օրը-ցերեկով վերջինիս տան մէջ, ուր իբր թէ սիրային յարաբերութիւն է ունեցել այդ կնոջ հետ։ Խ-ն գործը յանձնել էր դատարանին, որը յանցաւոր էր ճանաչել Զեռնդ քահանային և նոյնիսկ բանտ ուղարկելու տրամադիր։ Բայց միջնորդ մարդկանց թախանձանքին զիջելով՝ մեղադրող Խ-ն գործը հաշտութեամբ վերջացրեց։ Որսորդ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ՄԻ ԿԷՏ

Յայտնի է, որ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ ամեն մի թեմ տալիս է մի աշխարհական և մի հոգևորական պատգամաւոր։ Աշխարհական պատգամաւորը, որը ընտրվում է թեմի աշխարհական պատուիրակներից, ներկայացուցիչ է համարվում ամբողջ թեմի բազմահազար հայ հասարակութեան և որոշեալ մանդատով մասնակցում է կաթողիկոսական ընտրութեան, տալով իր ձայնը իրան ընտրող ժողովրդի ցանկացած թեկնածուին։

Ինչպէս աշխարհականը ընտրվում է աշխարհականներից, այնպէս էլ հոգևորական պատգամաւորը պիտի ընտրվի հոգևորականներից. սակայն ցաւելով պիտի ասենք, որ մեզանում, գոնէ ներկայումս, հոգևորական պատգամաւորները միմիայն նշանակովի չինովնիկներ են։

Ըստ Պոլոժենիայի՝ թեմի առաջնորդը նշանակովի ներկայացուցիչ է ամբողջ թեմի հոգևորականների. և քանի որ այդ այդպէս է, ամեն մի թեմական պէտք է լաւ իմանայ, թէ իր թեմի հոգևորականներից ով կամ մեծամասնութիւնը որ թեկնածուի կողմն է, որպէս զի ըստ այնմ և պատգամաւորական ժողովում իր ձայնը տայ թեմի հոգևորականների ցանկացած թեկնածուին։

Հայ աշխարհիկ հոգևորականութիւնը թէև անհամեմատ շատ է կուսակրօն հոգևորականներից, և չը նայած այս մեծ տարբերութեան՝ աշխարհիկ հոգևորականութիւնը զրկված է ընտրութեան գործում որևէ կերպ մասնակցելուց։

Այն ժամանակ, երբ թեմի ընտրած աշխարհական պատգամաւորը բերան է ամբողջ թեմի բազմահազար ժողովրդի, թեմի առաջնորդը ընդհակառակն է. նա իբրև մի մարդ՝ պատգամաւորական ժողովում նոյնքան ձայնի իրաւունք ունի, որքան թեմի մի աշխարհական պատգամաւոր։

Քանի որ տիրող պետական օրէնքը հոգևորական պատգամաւորներին, այն է՝ թեմական առաջնորդներին չէ արգելում թեմի հոգևորականների կարծիքներն իմանալ, ես ցանկալի եմ համարում, որ գոնէ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ մեր թեմականները մի փոքր ռամկավարական կարգերով առաջնորդվեն և գոնէ հէնց ձեի համար իրանց թեմի հոգևորականների կարծիքներն էլ ի նկատի առնէին կաթողիկոսական այս կամ այն թեկնածուի նկատմամբ։

Որքան հայ ընտրողների թիւը շատ լինի, այնքան ընտրութիւնը համազգային կը լինի։

Սոյն հարցի պարզաբանութիւնը և կաթողիկոսական ընտրութեան գործում աշխարհիկ հոգևորականների կորցրած կամ իւրացրած իրաւունքների վերականգնումը ես տպաւորում եմ իմ կարգակից ձեռնհաս ընկերներից և աւելի մեծ չափով՝ ժողովրդասէր ժամանակակից առաջնորդներից։

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

Ստաւրօպոլ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հանգուցեալ Սարաջևի այրին իր եղբօր միջոցով շնորհակալութիւն յայտնեց Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանին իր ամուսնու թաղմանը ներկայացուցիչ ուղարկելու և յարգելու համար։ Սրբազանը մինթարեց եղբօրը, յայտնելով որ հանգուցեալը իր բարեգործութեամբ, մանաւանդ աշխատող դասին չը մոռանալով, մշտական բարի անուն թողեց։

— Վաղը երեկոյեան մի շաբաթով Սանահին կը մեկնէ Թիֆլիսի թեմի առաջնորդի անձնափոխանորդ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանը։

— Էջմիածնի սինոդի կարգադրութեան համաձայն կարգալոյծ եղաւ Ղարաղաջի քահանայ Յովհաննէս Տէր-Յակոբեանը։ Կարգալոյծ անելու կարգադրութիւն կայ նաև Գօրու Մկրտիչ քահանայ Արշակունու վերաբերմամբ։

— Խոլերայի առիթով քաղաքային գործադիր-սանիտարական մասնաժողովը քաղդումայից զումարներ է խնդրում յայտնելու համար քաղ. Ջրմբարի խողովակները և առանձին ջրատար նասօսներ հիմնելու։

— Պետ. Դումայի անդամ Յ. Սաղաթելեանը մեկնում է Բօրչալուի և Գօրու գաւառը, Երևանի նահանգը և Ղազախի գաւառը, անտառների ուսումնասիրութեան համար կլիմայի տեսակէտից։ Սօչու գաւառն է մեկնում Պետական Դումայի անդամ Մէնշիկովը նոյն նպատակով։

— Թիֆլիսի էլեքտրաքարշի հետ 1910 թ. ընթացքում պատահել է 49 դժբաղդ դէպք։

— Զափազանց կոպիտ ու անկօրեկտ վերաբերմունքի համար հասարակութեան հետ՝ 8-րդ քաղաքամասի ոստիկանական վերահսկիչ Վասիլեվը ոստիկանապետի կարգադրութեամբ ենթարկվում է 7-օրեայ բանտարկութեան։

— Կարսի երկաթուղու Հաղպատ կայարանում կատարված յարձակման առիթով, «Т. Л.»-ի ասելով, ձերբակալվել է № 429 գնացքի գլխաւոր կօնդուկտոր Նիկ. Յինցաբաձէն, որ կասկածվում է կողոպտիչների հետ գաղտնի կապակցութիւն ունենալու։

— Դիդուբէի ագատ հողաբաժինների վրա նախատեսվում է հաստատել ռուսական գաղթատեղի։ Այդ խնդրի ուսումնասիրութեամբ է զբաղված ներկայումս Կովկասի Փոխարքայի խորհուրդը։

— Թիֆլիսի նահանգապետը չը հաստատեց քաղ. դումայի ընդունած այն ծրագիրը, որի համաձայն Դիդուբէի հողաբաժինները առանձին-առանձին յատկացվելու էին կայարաններ կառուցանելու։ Նահանգապետը առաջարկում է հողաբաժինների բաժանելը կատարել ներքին գործերի մինիստրութեան 1870 թ. փետր. 25-ի հրահանգների պահանջներով, որից յետոյ յիշեալ հողամասերը կարելի է տալ կապալով։

— Ինչպէս յայտնի է, քաղաքային տնտեսական մասնաժողովը իջեցրեց մսի սակագինը։ Սակայն մինչև օրս այդ որոշումը կարելի չեղաւ գործադրել, որովհետև մասնաժողովի որոշումները վարչութեան միջոցով հաստատվում են դումայից, մինչդեռ ամառը դումայի նիստերը յետաձգված են։ Միւս կողմից էլ քաղ. վարչութիւնը չէ կանխել առնելու դումայի լիազօրութիւնը՝ այդօրինակ որոշումներ հաստատելու կամ բեկելու։ Այնպէս որ մսի սակագնի պակասեցման որոշումը առ այժմ թղթի վրա է, իսկ այդ հանդամանքից օգտվում են ագահ մսավաճառները իրանց ուզածին պէս շահագործելու մանաւանդ չունևոր դասին։

— Կիրակի օրը, յունիսի 10-ին, Թիֆլիսում լուրեր տարածվեցին, թէ երևան են հանված ասիական խոլերայի երեք դէպք։ Ինչ կասած, որ լուրերը ունեցան իրանց ճնշող ազդեցութիւնը դիւրահաւան ազգաբնակութեան վրա։ Բայց շուտով իրողութիւնը պարզվեց. այդ օրը խոլերայի կասկածելի նշաններով հիւանդացան պոդպօրուչիկ Դեմեաշկին (Կապտերօվսկայա փ. տ. № 10), որին տարան զինուորական հիւանդանոցը, Նիկոլայ Բուաձէ (Վօկզալնայա փ. տ. Թամամշեանի) և Լիւբով Դոլգաչէվան (Կիպիանովսկայա փ. տ. № 5)։ Վերջիններին տարան խոլերայի բարակները։ Հիւանդացածների բնակարաններն անմիջապէս ախտահանվեցին։ Բակտերիոլոգիական մանրազննին քննութիւնը երևան հանեց, որ յիշեալ երեք դէպքից և ոչ մինը իսկական խոլերա չէ։ Յուլիսի 9-ին խոլերայի կասկածելի նշաններով հիւանդացել էր ուսուցչուհի Գէղրուտա Բեռէն, 25 տարեկան, որի բնակարանը նոյնպէս ախտահանվեց։

— Թաւրիզից մեզ գրում են, որ պարսից կառավարութիւնը Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին շնորհել է Շերի-Խուրշիդ պատուանշանի երկրորդ աստիճանը։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

— Երկուշաբթի, յունիսի 11-ին, Վրաց թատրօնի դահլիճում կայացաւ Վրաց Դրամատիկական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի շարունակութիւնը, նախագահութեամբ իշխ. Գր. Դիասամիձէի և քարտուղարութեամբ Շ. Դաւիդովի։ Ժողովը առաջին հերթին քննութեան առաւ իշխ. Պ. Թումանիշվիլիի առաջարկը, բեմի և թատրօնի վերակազմութեան հարցերի մասին։ Երկար քննադատութիւններից յետոյ ժողովը՝ հակառակ զեկուցանողի առաջարկի, այն է մի առ ժամանակ ներկայացումների կազմակերպումը դադարեցնել, թողնելով այդ դերասաններին կամ մասնաւոր մարդկանց, և խմբի վրա ծախսվելիք դրամը Դրամատիկ. Ընկերութիւնը յատկացնի ընդունակ դերասաններին դրամատիկական կուրսերն ուղարկելով (Ռուսաստան կամ արտասահման), մերժեց այդ առաջարկը և վճռեց, որ խումբը պիտի պահվի Դրամատիկական Ընկերութեան միջոցներով։ Ապա ժողովը քննեց վարչութեան ներկայացրած նախահաշիւը, բայց որովհետև չը պարզվեց վրաց ազնուականութեան կողմից տրվող նպաստի չափը, այդ պատճառով էլ ժողովը յանձնարարեց վարչութեանը բանակցել այդ առիթով վրաց ազնուականութեան խորհրդի հետ և պարզել նպաստի խնդրի չափը։ Վրացի դերասաններ պատրաստելու համար դրամատիկական դասընթացքներ հիմնելու հարցը առ այժմ անկախ մնաց, միջոցների բացակայութեան պատճառով։ Վարչութիւնը ներկայացրել էր երկու նախահաշիւ, որոնցից մէկով առաջիկայ թատերական սեզոնի ընթացքում մուտք հաշած էր 17,800 ռուբլի, իսկ ելք՝ 16,860 ռուբլի, առանց ազնուականութեան նպաստի։ Երկրորդ նախահաշիւով, ազնուականութեան նպաստով մուտքը հաշած էր 42,650 ռ., իսկ ծախք՝ 41,650 ռուբլի։

Նախորդ ժողովներից մէկում որոշվել էր յանձնարարել Դրամատիկ. Ընկ. վարչութեանը քննել անդամավճարի նուազեցման հարցը, 5 ռուբլին վերածելով 3 ռուբլու, և այդ մասին զեկուցել առաջիկայ ընդհանուր ժողովին։ Նայելով Ընկերութեան անդամների և վարչութեան տրամադրութեան, կարելի է կարծել, որ անդամավճարը 5 ռուբլուց կիջեցվի 3 ռուբլու։

Վերջը ժողովը ընդունեց անդամագրված նոր անդամներին։ Վարչութեան նախագահ Ն. Քարթվէլիշվիլին խնդրեց ժողովից ազատ կացուցանել իրան նախագահի և վարչութեան անդամի պաշտօնից։ Ժողովը միաձայն խնդրեց նրանից շարունակել իր պաշտօնը և ծափահարութիւններով հարկադրեց նրան յետ վերցնել հրաժարականը։ Նոյնպիսի խնդրով դիմեց ժողովին վարչութեան բժ. Ն. Միքելաձէն. ժողովը տանելով նրա վճռական մերժումը, որոշեց խնդրել նրանից պաշտօնը շարունակել գէթ մինչև սեպտեմբեր ամիսը, երբ և տեղի կունենան վարչութեան երկու անդամի և երեք փոխ-անդամի ընտրութիւնները։ Մինչ այդ ժողովը միաձայն և բուռն ծափահարութիւններով վարչութեան անդամ ընտրեց իշխանուհի Անաստասիա Մաչաբելին (անցյալ կորած յայտնի գործիչ Վասիլ Մաչաբելիի այրուն), ի նկատի առնելով նրա եռանդուն գործունէութիւնը յօգուտ Վրաց Դրամատիկ. Ընկերութեան, բայց իշխանուհին կտրականապէս հրաժարվեց այդ պաշտօնը ընդունելուց։ Ժողովի վերջում բազմաշատ դերասան Վ. Գուլնին ի նկատի առնելով, որ այս տարի արդէն լրացաւ Վրաց Դրամատիկական Ընկերութեան գոյութեան 30-ամեակը, առաջարկեց ի յիշատակ այդ օրվայ առաջիկայ սեզոնում կազմակերպել մի հանդիսաւոր ներկայացում, իսկ նախ քան այդ հրաւիրել Վրաստանի այլ և այլ վայրերից ներկայացուցիչների համագումար Վրաց թատրօնի գործի մասին խորհրդակցելու համար։ Ժողովը ընդունելով Վ. Գուլնիայի առաջարկը, յանձնարարեց վարչութեանը կօոպտացիայով հրաւիրել կարող անձանց, համագումարի օրակարգը և զբաղման հարցերը մշակելու համար։

— Կիրակի, ամսիս 10-ին, երեկոյեան 9 ժամին Բեթանիա մենաստանից (Թիֆլիսից 20 վերստի վրա) Թիֆլիս վերադարձաւ այն էքսկուրսիան, որ գնացել էր վանքը դիտելու։ Վանքը և նրա շրջակայքը, էքսկուրսանների պատմելով, աքանչելի տպաւորութիւն է թողել նրանց վրա, հնութիւ իր հարուստ ընութեան, լեռնային օդի, ճոխ բուսականութեան և մանուշահամ ջրերի։

— Քութայիսում, մաշիկ կարողների վարպետները, թւով 40 հոգի, աշխատանքի ժամերի յաւելման պատճառով գործադուլ են յայտարարել։ Նրանց նախ կանչել են ոստիկանապետի դիւանատուն, իսկ ապա ուղարկել են բանտ։

— Լոյս տեսաւ Քութայիսում հրատարակվող «Կօոպերացիա» շաբաթաթերթի 3-րդ համարը, հետաքրքրական բովանդակութեամբ։

— Թիֆլիսի վրաց դերասանական խմբի անդամների մի խումբ ներկայիս Կախէթիայի և այլ վայրերում աջողութեամբ կազմակերպում է ներկայացումներ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

— Մեծ-Ղարաքիլիսա, 10 յուլիսի

Հայ Դերասանների Ընկերակցութիւնը ամսիս 9-ին տուաց իր երրորդ ներկայացումը։ Խաղաց՝ «Էմմա» 1 գործ. դրամատիկ. էտիւդը և Մարկ-Տուէնի «Ինչպէս դառաւ նա խմբագիր» 2 գործ. պիէսը։

«Էմման» իբրև պիէս լաւ տպաւորութիւն չը թողեց հանդիսականների վրա։ Եւ եթէ ամերիկացի տաղանդաւոր երգիծաբանը գրողի շնորհալի պիէսը օգնութեան չը գար թարմացնելու հանդիսականներին, ներկայացված առաջին պիէսի բացասական տպաւորութիւնը կատարեալ կը լինէր։

Վերջին պիէսը հասարակութեան մէջ առաջացրեց անվերջ ծիծաղ։ Խաղը անցաւ շատ սահուն։ Մ. Ղ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ցիւրիխ, 22 յունիսի

«Մշակի» № 131-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում Ցիւրիխից Հմ. Ք. Օհանեանցը մեր դպրոցի նիւթական ուսումնական համառօտակի տեղեկագիրն է տուել։ Այդ տեղեկագրում, սակայն, կան մի քանի անճշգրտութիւններ, որոնց ուղղումը մեր բարոյական պարտքն ենք համարում իբրև դպրոցի աւագ ուսուցիչ։ Տէր-հայրը գրում է. «Տեղիս եկեղեցու երեցփոխը և ուսումնարանի աւագ ուսուցիչը դասերը թողած՝ գնացին Թիֆլիս Մանթաշեանի թաղման իբր թէ ներկայ լինելու, բայց խօսկալէս ոչ թէ թաղմանը ներկայ լինելու և պատուելու հանգուցեալի ամուսնալի յիշատակը, այլ փող ուզելու նպատակով»։ Այս տողերն իրականութեան չեն համապատասխանում, քանի որ մենք Թիֆլիս էինք գնացել յատկապէս ոչ միայն Մանթաշեանի թաղմանը ներկայ լինելու, այլ ի միջի այլոց ներկայ գտնվելու։ Իսկապէս ինձ ուղեցցիր հոգալարձութիւնը լիազօրել էր իր № 41 գրութեամբ գնալ Թիֆլիս հետևեալ գործերը վարելու. ա) Խորհրդակցելու 6,000 ռ. դրամագլխի մի ուրիշ դրամատան տեղափոխութեան առիթով առաջնորդական փոխանորդ Եփրեմ եպիսկոպոսի հետ. բ) Կոնսիստորիայի փաստաբանի հետ՝ դպրոցիս 500 ռ. առիթով. գ) Պետ. դիրեկցիայի. դ) Տէր. Մ. Պաղտվանցի՝ նրանից ստացվելիք դպրոցի վերանորոգութեան համար դրամներ ստանալու և ե) Ի միջի այլոց ներկայ գտնվելու Մանթաշեանի թաղմանը։ Ապա տէր-հայրը ուսումնականի վերաբերմամբ ըստ ծրագրի գտնում է խոշոր թերութիւններ։ Բայց նա երբ ստանձնում է քննադատի դերը և ընդհանրութեան ուշադրութիւնը հրաւիրում՝ դպրոցիս ուսուցչ. խմբի վրա անսպասելի կարծիք յայտնելով, այդ պարագայում ինքը քննադատը պարտաւոր է նախօրօք հիմնովին քննել տեղեկանալ բոլոր պատճառների մասին (մանկավարժութեան և ծրագրի հետ կապ ունի) և ըստ այնմ հրապարակել։ Եթէ թելադրել լինենք մի առ մի այն բոլոր արգելարգելի պատճառները, շատ կը ձգձգվէր. աւելի լաւ է երկողով ասել, որ դպրոցը գտնվում է միանգամայն հակասական պայմանների մէջ, հետևաբար ուսումնական մասն էլ պիտի կատ։ Բաւական է մի երկու օրինակ բերել խօսքերը ապացուցելու համար. 1) դպրոցում չի պարապված 9 ամսվայ ընթացքում մի ամիս ձիւնի ու ցրտերի պատճառով, 2) բաժանմունքները միացած լինելով ցանկալի արդիւնք չէր ստացվի ի հարկէ, 3) որ դպրոցը երկու տարի առաջ բաղկացած է եղել երեք բաժանմունքից մօտ 60—70 երկսեռ մանուկներով մի խնամ ու մութ սենեակում հաւաքված և մի ուսուցիչը պարապելիս է եղել բոլորի հետ միաժամանակ, հետևաբար ուսուցիչը որքան ջանասէր լինէր, ցանկալի արդիւնք երբ՛ք չէր ստացվի. պարզ է ուրեմն, որ այդպիսի խախտուն հիմքերի վրա դրված լինելով ուսումն. մասը՝ իր կնիքը կը դրոշմէր յետագայում. այդպէս էլ եղաւ. և 4) ծրագիրների յանկարծակի փոփոխութիւնը անպայման մեծ դեր է խաղում ուսումնականի վերաբերմամբ։

Ցիւրիխի դպրոցի աւագ ուսուցիչ՝

Յովհ. Դաւթեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Պարսից էկս-շահին շարունակ կանչում էին Պարսկաստանից նրա գաղտնի խորհրդականները։ Միայն յամառ խնդիրներից յետոյ շահը համաձայնեց։

— Մահմէդ-Ալիին շատ մօտ անձերից մինը յայտնեց, որ Մահմէդ-Ալին Պարսկաստանին կը տայ սահմանադրութիւն, հեռացնելով նրանից կորցրած գահը ձեռք ձգելու հարցերը։

— Ազգեցիկ պարսիկները հաւատացնում են, որ Մահմէդ-Ալին իր համարձակ քայլի անաջողութեան դէպքում մահ կը ստանայ։

— Լուրերին նայած, պարսից պետական խնամակալը Մահմէդ-Ալիից ստացել է այսպիսի հեռագիր. «Ցանձնարարում եմ ձեզ հետևել մայրաքաղաքի կարգ ու կանոնին՝ մինչև իմ քաղաք մտնելը։ Ես իմ թշնամիների հետ կը վարվեմ մեծահոգութեամբ»։

— «Р. С.»-ի թղթակիցը այցելեց Բաղէն, ուր ներկայումս գտնվում են էկս-շահի կինը և երկու զաւակները։ Մահմէդ-Ալիի ֆրանսիախօս քարտուղարը արևելեան խորամանկութեամբ թղթակցի բոլոր հարցերին տուել է միշտ խուսափողական պատասխաններ։

— Վերադարձած էկս-շահին ձերբակալելու ուղարկված զօրամասի հրամանատար կարգվեց Եփրեմը։ Զօրամասում գերակշռում են թիւով բախտիարները։

— Անգլիացի յայտնի արեւելագէտ Լէնչը կարծում է, որ Ռուսաստանը պէտք է արդարացնէ իրան Եւրոպայի առաջ, որովհետև նա պարտաւոր էր թոյլ չը տալ շահին Պարսկաստան վերադառնալ։

— Աւստրիական դիպլոմատիան ուրախ է, որ էկս-շահին աջակցում է Ռուսաստանը, քանի որ դրանով կարող է անհամութիւն երևան գալ Անգլիայի և Ռուսաստանի միջև։

— Ամբողջ եւրոպական մամուլը օրվայ խնդիր է դարձրել պարսկական հարցը։ Առանձնապէս շատ մեկնաբանութիւններ են լինում Բերլինում։

— Ռուսաց կաբինէտը պաշտօնապէս տեղեկացրեց Անգլիային, որ իրան բնաւ յայտնի չէր էկս-շահի Պարսկաստան մտնելու գաղտնի դիտաւորութիւնը։ Այնպէս որ անաջողութեան դէպքում ամբողջ պատասխանատուութիւնը իր վրա է առնելու՝ Մահմէդ-Ալին։ Ռուսաց կառավարութիւնը միայն լրագիրներից տեղեկացաւ Մահմէդ-Ալիի Պարսկաստանում երևալու մասին։

— Մարօկկոյի առիթով Ֆրանսա-գերմանական բանակցութիւնները մի առժամանակ դադար առան։

— Անգլիական և ֆրանսիական լրագիրները ընդդիմախօսական յօդուածներ են տպում Գերմանիայի անկուշտ պահանջների առիթով։ Մամուլը Գերմանիայի պահանջները համարում է անիրագործելի և ոչ լուրջ։

— Բ. Դուռը տեղեկութիւններ է ստացել, թէ իբր ապատամբ մալիսորները յետ են վերցրել իրանց պահանջը մեծ պետութիւնների երաշխաւորութեան մասին։

— Կ. Պոլսում պաշտօնավարող իտալական դեսպանը յետ կանչվեց։

— «Pro Albania» կոմիտէն սպառնում է ընդհանուր ապստամբութեամբ, եթէ Բ. Դուռը ընդառաջ չը գնայ մալիսորների պահանջներին։

— Թիւրքաց կառավարութիւնը ոտ ու ձեռք է ընկել կապանաւորելու ալբան ապստամբների գլուխ Իսմայիլ Բէյմալին։

— Եպաշնիան Անգլիայի հետ միջնորդ դատարանի պայմանագիր կնքելուց յետոյ՝ ուզում է այդպիսին կապել իր լաւերայն թշնամի Միացեալ-Պետութիւնների հետ։

— Բլագովէշչէնսկում կախաղան բարձրացրին 21 խուլիգաններ՝ աւազակութեան պատճառով։

— Զինական կառավարութիւնը բողոքեց Պէկինի ռուսաց դեսպանին՝ ռուսական զօրքերին Մանչուրիա մտցնելու առիթով։

— Պետերբուրգում կառուցվող մանրեգական մզկիթը շուտով պատրաստ կը լինի։

— Բոստոնում (Դ./վ.) միաժամանակ թունաւորվեցին մի տղամարդ և երկու աղջիկ։ Պատճառը յայտնի չէ։

— «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործը, «Р. В.»-ի ասելով, քննվելու է նոյեմբերին Եկատերինոսլաւում կառավարիչ սենատի առանձին տեսանի նստաշրջանում։ Այդ գործի առիթով մեղադրվում են 200 մարդ։ Վկաներ կանչված են մօտ 500 հոգի։ Մեղադրանքը ձևակերպված է քր. պատժ. 102-րդ և 129-րդ յօդուածներով։ Նախագահելու է սենատոր Վարվարինը։

— Ժող. լուսաւորութեան մինիստրը կասսօն կարգադրել է Պետերբուրգի համալսարանում այս տարի ընդունել 2250 ուսանողների, որոնց թիւում նաև 67 հրէաների։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
11 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լիւտկէի գործարանում պայթումից ծանր վիրաւորվեցին երեք հոգի, որոնց անվտանգ դրութեան մէջ տարան հիւանդանոց։ Շինութիւնը քանդվեց։

ԳՐՕԴՆՕ։ Կայծակից սպանվեցին չորս մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատը որոշեց Թիֆլիսի դատաստանական պալատին յանձնել քր. պատժ. 362-ը և 411-րդ յօդուածների մեղադրանքներով Զուգդիդի ազնուականութեան նախկին պարագլուխ իշխան Ապակիձէին։

Եկաւ Միացեալ-Պետութիւնների նոր դեսպան Կուրտիս Գայլէը իր ամուսնու հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ամսական երթևեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I **Պօսայիսն-մարդասար օգնեանները.**

Երեքշաբթի ժամի 12½-ին վերջը շաբաթակի գծով.
Հինգշաբթի » 12½ » » »
Շաբաթ » 12½ » ուղղակի »

II **Մարդասար օգնեանները.**

Երկուշաբթի ժամի 1 ցերեկը, շաբաթակի գծով։
Շաբաթ » 12 » » »

III **Մարդասար-ապրանքակիր օգնեանները.**

Չորեքշաբթի առաւ. ժամի 4-ին շաբաթակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՕՍՏԱՑԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն գէպի Ազբսանդրիայի, Բօլգարիայի, Մանիգօնկայի, Սերբիայի, Ռնասալիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱՂՏԻԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ, Ռիգա, Լիբաւա և Ռէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինսկայա փողոց, № 18.

Հեռաձայն № 11.

Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ծեռնտու պայմաններով։

Գործակալ՝ **Ս. Խ. Սալխանեանց**

(2.) 0—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՔՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԻՐԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՀԽՊՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲՈԲՈՒՆՍԿԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկաֆաբ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԳԱՐԱԳԵՇԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

3. 0—70

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Ս. ՉԷՐԲԻԶԵԱՆԻ

Օրմանեանը զրպարտութեան ցանցերում

Գինն է 30 կոպ.

Դիմել «Հովիտ» խմբագրութեան և գրավաճառներին։ (ա.օ.) 717. 10—1

Утвержденные Министерств. Торговли и Промышленности

ТОРГОВАЯ ШКОЛА

СЪ ПРАВАМИ ПРАВИТЕЛЬСТВЕН. СРЕДНИХЪ УЧЕБНЫХЪ ЗАВЕДЕНІЙ

и

БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ

ДЛЯ ЛИЦЪ ОБОЕГО ПОЛА

А. И. ТЕРЪ-КАСПАРОВА

Баку, уголъ Красноводской и Меркурьевской. Телефонъ № 10—56.

ШКОЛА и КУРСЫ даютъ полную теоретическую и практическую подготовку къ бухгалтерской и прочей дѣятельности въ торгово-промышлен. и иныхъ учрежденіяхъ.

Полный курсъ въ школѣ три года, на курсахъ 6—8 мѣсяцевъ.

Пріемъ въ младшій приготовительный и первый классы ШКОЛЫ съ 20 Августа, НА КУРСЫ съ 1 Сентября ежедневно.

Представившія свидѣтельства объ окончаніи 2-хъ классн. сельск. училищъ, 4-хъ классовъ городскихъ училищъ и перваго класса среднихъ учебныхъ заведеній принимаются въ первый классъ ШКОЛЫ безъ экзамена.

Пробныя свѣдѣнія о ШКОЛѢ и КУРСАХЪ выдаются и высылаются безплатно.

(Հ. Կ.) 709. 20—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.